



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Խմբագրական

ՃՆՄԱՐԻՏ ՄՏՔԻ ՆՈՐՈԳՈՒԹԻՒՆԸ

Հոգ. Կեանք

ՉՕՐՈՒԹԵԱՆ ՍՊԱՍԵԼ
 ԱՐՏՕՆՈՒԱԾ ԹԷ ԱՐԳԻԼՈՒԱԾ
 ԿԸ ՓԱՓԱԷԻ
 ՃՇՃԱՐԻՏ ԱՊԱՇԽԱՐՈՒԹԻՒՆԸ
 «ՊԷՏՔ Է ՉԵԶԻ ՆՈՐԷՆ ԾՆԱՆԻԼ»
 ԱՅՍՕՐՈՒԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ

Ազատ Թարգմ. Ն. Մ.
 Թրգ. Տ. ԳԱՐԱՄԱՆՈՒԿԵԱՆ
 Վ. Ս.
 Վեր. ՆԻԳՕԼԱ ՓԱՓԱԶ

Ս. Գրական ուսումնասիրութիւն

**ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ՄԻՍԻՈՆ. ԳՈՐԾԸ
 ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆԸ**

Բրոֆ. Գ. Գ. ԽԱՅԻԿԵԱՆ
 Զ. Բ. ՊՈՒՏԱԳԵԱՆ

Կենսագրական

ՕՊԸՐԼԻՆ

X X X

Մանկանց սիւնակ

ՆԻԿՕԼ
ՀԱՐՑՈՒՄՆԵՐ ԳՈՐԾՔ ԱՌԱՔԵԼՈՅԷՆ

ՏԻԿ. ՆՈՅԵՄԻ ՎԻՏԷՄԱՆ

ԲԱՆԲԵՐ հոգեւոր ամսաթերթը թէեւ ֆրանսահայ Աւետարանական եկեղեցիներու պաշտօնաթերթն է, այսու ամենայնիւ, նպատակ ունի ծառայելու ամենուն, որոնք Տշմարտութիւնը կը փնտռեն եւ ծարաւը կը զգան Աստուծոյ խօսքին անխարդախ վկայութեան : Քանի որ Քրիստոս չեկաւ միայն կարգ մը անհատներու համար, այլ ամենուն, ուստի Տշմարիտ «Բան»ին ներկայացուցին ալ չճանչնար ո եւ է յարանուանութիւն մը, հապա մէկ է անոնց հետ, որոնք Քրիստոսի մէջ իրեն կը միանան : ԲԱՆԲԵՐ կ'ուզէ ծառայել անոնց :

ԲԱՆԲԵՐ հոգեւոր ամսաթերթը երկու լեզուներով կը հրատարակուի Հայերէն եւ թուրքերէն : Իւրաքանչիւրն ունի իր խմբագրական մարմինը : Երկուքն ալ կը տպուին Մարսէլի մէջ : Հայերէնը ունի 16 էջ (կողքէն ռուս) : Անոր պատասխանատու խմբագիրն է՝

ՅՈՎՀԱՆՆԷՍ Ն. ՂԱԶԱՐՈՍԵԱՆ, Մարսէլ

Թուրքերէնը ունի 8 էջ ո՛ր է հայերէնին թարգմանութիւնը ալ տարբեր բովանդակութեամբ : Այս պարագան ղիւրութիւն կուտայ որ թուրքերէն գիտցող մը անկէ ալ կընայ օգտուիլ : Թուրքերէն մասի պատասխանատու խմբագիրն է՝

ԺՕԶԷՅ Կ. ՊԱՐՍՈՒՄԵԱՆ

18, Rue du Docteur Rebatel — LYON (France)

որու ղրկուելու են նաեւ բոլոր թուրքերէն յօդուածները :

ԲԱՆԲԵՐԻ համար յօդուած կրնան գրել անոնք միայն, որոնք գիտեն վերստին ծնունդն ու հոգեւոր կեանքը եւ անոր մէջ ապրելու ամենօրեայ ուրախութիւնը կը վայելեն Քրիստոսով :

|||||

ԲԱՆԲԵՐԻ բաժանորդագրութիւնը տարեկան է
եւ կանխիկ :

— **ԲԱԺՆԵՔԻՆՆ Է** —

ՀԱՅԵՐԷՆԸ Ֆրանսա եւ Սուրիա 13 Ֆրանք
Արտասահման 20 Ֆրանք կամ 80 Սէնթ

ԹՈՒՐԿԵՐԷՆԸ Ֆրանսա եւ Սուրիա 7 Ֆրանք
Արտասահման 10 Ֆրանք կամ 10 Սէնթ

ՀԱՅԵՐԷՆ եւ **ԹՈՒՐԿԵՐԷՆ** միասին Ֆրանսա եւ
Սուրիա 20 Ֆրանք եւ Արտասահման 27 Ֆրանք
կամ 1 Տօլար եւ 10 Սէնթ

Թղթակցութիւններ եւ յօդուածներ ղրկուելու են
թերթիս խմբագրութեան, հետեւեալ կերպով.—


Réd. «PANPÈRE» c/o Rev. H. N. GHAZAROSSIAN

7, Rue Papère

MARSEILLE (France)

Արձնացի՛ր դուն
որ կը քնանաս, եւ
կանգնէ մեռելնե-
րէն, ու քրիստոս
քեզի լոյս պիտի
տայ:
Եփես. Ե. 14

ԲԱՆԲԵՐ



Ուրեմն ա՛լ վախճանք, որ ջրլայ թէ
Անոր հսնգիտոր մտնելու խոստմանքէն որ մեզի մնացեր է,
ձեզմէ մէկը զրկուած գտնուի: Երբ. Գ. 1

Քանզի ալ աս-
կէ քիչ մը ատենէն
Ան որ գալու է՝
պիտի գայ ու պի-
տի ջուշանայ:

Երբ. Ժ. 37

Ը. ՏԱՐԻ

ՓԵՏՐՈՒԱՐ 1952

ԹԻԻ 2

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՃՇՄԱՐԻՏ ՄՏՔԻ ՆՈՐՈԳՈՒԹԻՒՆԸ

Ձեր մտքին նորոգութիւնովը նորոգուեցէք:

Հռով. ԺԲ. 2

Քրիստոնէական կեանքի այս կարեւոր վիճակն ու անոր գործունէութիւնը դժբաղդաբար զանազան շրջանակներու մէջ տարբեր եւ հետեւաբար սխալ նշանակութիւններով հասկըցւած է:

Մտքի նորոգութիւն ըսելով ոմանք ապաշխարութիւն կը հասկնան եւ ապաշխարութիւն կը սեպեն, երբ մէկը իր անբարոյական, հաճոյասէր, խաղամոլ կամ զինեմոլ կեանքը ձգելով ալլելու բարի բաներով զբաղի: Կամ երբ մէկը իր սրճարան երթալը նուազեցնելով կիրակի օրերը եկեղեցի ալ կը յաճախէ: Կամ երբ մին իր սրկարէթն ու գաւաթ մը զինին ձգած, ինքզինքը եկեղեցւոյ անդամութեան թիկնածու կը զնէ: Կամ երբ մէկը առօրեայ գործերուն մէջ անխարդախ եւ ուղիղ, իր ջանքովն ու գործերովը, հանդարտաբարոյութեամբն ու բարոյական բարձր դիրքովը, նաեւ Սբ. գրական հարցերով կ'զբաղի եւ հետաքրքրութիւն ցոյց կուտայ կրօնական բաներու համար ալ: Կամ երբ մէկը եկեղեցասէր է, կիրակին շապիկ կը հագնի, շարական կ'երգէ, կամ երգիչ խումբի, եւ նոյնիսկ այրերու եղբայրակցութեան անդամ է, եկեղեցիին համար բուռն ջանքեր կը թափէ, բարոյական եւ նիւթական մեծ գոհուածութիւններ կ'ընէ, նոյնիսկ երբեմն ազօթաժողովներու մէջ ալ գտնուելով իր ձայնն ալ լսելի կ'ընէ երգով մը կամ աղօթքով մը:

Յիշաւի աւելի լաւ է տեսնել բարեկարգ մարդիկ, քան խարդախ եւ ապականածներ: Ազնիւ նկարագիրներ, քան անբարոյականներ: Անշուշտ աւելի հաճելի է հանրակառքերով ճամ-

բորդներու ձեռքին մէջ ումաններէ աւելի Սուրբ Գիրք մը տեսնել: Անտարակոյս բարոյական բաներ ունին իրենց անուրանալի արժէքներն բայց անոնք չեն այն, ինչ որ կը կոչենք ապաշխարութիւն, եւ ո՛չ նուազ ինչ որ կը կոչենք վերստին ծնունդ կամ մտքի նորոգութիւն:

Տբ. Թօրի տեղ մը կ'ըսէ, «Բարեկարգութիւն, աղօթք, Ս. Գիրք կարդալ, բարոյականութիւն, նպաստաբաշխութիւն, մկրտութիւն և եկեղեցւոյ անդամակցութիւն ամէնն ալ իրենց որոշ արժէքն ունին, բայց ոչ մին եւ ոչ ալ ամէնը միասին կրնան վերստին ծննդեան տեղը բռնել»:

Արդ, մտքի նորոգութեան գործառնութեան մէջ երկու կարեւոր ազդակներ կան, զորոնք նրկատի առնելու ենք:— Ա. Մտքի փոփոխութիւն, որ մարդկային գործառնութիւն մըն է, անհատին կողմէ ի գործ դրուած, երբ ինքը կատարեալ համոզումով եւ զիտակցութեամբ իր միտքը, իր տեսակէտը, կեանքի ուղղութիւնը կը փոխէ առ Աստուած: Ուրիշ խօսքով, կը զղջայ եւ կ'ապաշխարէ: Բայց կայ ուրիշ գործառնութիւն մը որ մարդուս կարողութենէն դուրս է, մտքի կամ կեանքի նորոգութիւնը, որ բացարձակ աստուածային անկախ գործառնութիւն մ'է:

Ս. Հոգին Ինքն է որ վերստին կը ծնանի (Յով. Գ. 5), կը նորոգէ: Այս վերստին ծննդեան գործողութիւնը տեղի կ'ունենայ Յիսուս Քրիստոսի արեան հիմին վրայ: Բայց այս երկու գործառնութիւնները սերտօրէն իրարմէ կախում ունին, մին առանց միւսին չըլլար: Մարդս չկրնար Աստուծոյ որդի ըլլալ միայն ապաշխարելով ու առանց վերստին ծննդեան: Աստուած չկրնար փրկել մարդը, եթէ անիկա կատարեալ զղջումով ու խոնարհութեամբ Իր առջեւ չապաշխարէ և զթութիւն

չհայցէ: Այս սերտօրէն իրարու կապուած կրկին գործողութեամբ վերստին ծնած, նորոգուած միտքը կը հասկնայ թէ ինքը այլեւս մարմինը սնուցանելու կանչուած չէ, իր անձնական խորհեակերպին այլեւս չկրնար վստահիլ, ո՛չ ալ մարդկային խօսքերուն (մարմինէն ծնածը մարմին է) հապա միայն Անոր խօսքին, որու նպատակն է հաւատացեալին երջանկութիւնը: Անիկա հաստատօրէն կը հասկնայ նաեւ թէ ինքը Աստուծոյ փառքին եւ Անոր հաճութեան համար ապրելու կանչուած է: Առաքեալը կ'ըսէ, «Որպէսզի . . . կեանքի նորոգութեան մէջ պտըտիք» (Հռովմ. 2. 4): Ուստի յայտնի է թէ մտքի նորոգութիւնը ո՛չ չեղօք, եւ ոչ կրաւորական վիճակ մըն է, հապա ներգործական: Այդ վիճակը կեանքի փոխուիլ կ'ուզէ: Սակայն հաւատացեալը առաջին քայլով չկրնար մխրճել կեանքին խորը, այլեւայլ ներքին եւ արտաքին պատճառներով որոնց հետեւանքով յաճախ նաւակոծութեանց կը հանդիպի: Թեքեալ ինք կը խորհի թէ այդ մտքի փոփոխութեան առաջին օրուան մէջ իսկ պիտի կրնայ հասնիլ աւելի մեծ եղբօր մը մակարդակին, թէ Տէրը իրեն առջեւ յարդարուած, վարդարոյր խճուղիներ պատրաստած ըլլալու է, որուն մէջէն ինքը քալէ եւ հասնի պտղալից եւ պտղատու կեանքին: Բայց հազիւ թէ առաջին քայլը կ'անէ, կը գտնէ իր առջեւ հազար ու մէկ խոչնդոտներ, որոնց իւրաքանչիւրին յաղթել պէտք է: Ու այդ առաջին քայլին արդէն կը տեսնէ թէ ինքը այդ յաղթութեան համար բաւական չէ, զօրութիւնները լեռներու չափ բարձր են եւ անհամար, ու ինք գորութիւն չունի սոյն բարձրագոյն նպատակը իրագործելու, ընդհակառակն կը գտնէ նոյնիսկ իր մէջ յամառ ընդդիմութիւն մը այլեւայլ խորհուրդներու, զգացումներու, փափաքներու, որոնք խիզախօրէն կը ցցուին հաւատացեալին դէմ, զինքն արգիլելու իր մտայնութենէն: Օ՛, ի՜նչ խղճալի մարդ եմ ես, ո՛վ պիտի ազատէ զիս այս մահացու մարմինէն: Բայց Տէրը մօտ է ցոյց տալու իրեն թէ իր յաջողութիւնը միայն գործակցութեան մէջ ապահովուած է, հաւատացեալին համար Տէրը Ինքը պիտի պատերազմի (Ելից Ժ. 14): Միայն երբ ինք Անոր յանձնուի բոլորանուէր, միայն երբ Ան ստանցնէ կատարեալ ղեկավարութիւնը, երբ Քրիստոս ըլլայ իր կեանքին իշխանն ու կառավարը, այն ատեն եւ միայն այն ատեն պիտի կրնայ պատիլ կեանքի նորոգութեան մէջ:

Պտըտիլ, հոս չնշանակեր զբօսնուլ, հապա քալել, շարժիլ, գործել և ապրիլ Քրիստոսով:

Չարմանալի համաձայնութիւն մը այսպէս կը տիրէ երրորդութեան եւ հաւատացեալին մէջ ու այս բանը կը տեսէ անոր աշխարհային կեանքին բոլոր օրերուն մէջ, որքան ատեն որ նա հնազանդ եւ լսող է ու իր բոլոր գործունէութիւնը Անոր քննութենէն կ'անցնէ: Տէր Յիսուս ըսաւ, «Այն ամէնը որ Հայրը Ինծի կուտայ, երբեք դուրս պիտի չհանեմ, պիտի չկորսնցնեմ» Յովհ. 2. 37-39: Արդ, հաւատացեալը այս վստահութիւնով կը քալէ, օրէ օր աւելի մեծ ուրախութիւն վայելելով եւ վայելեցնելով այսինքն, լուսաւորուելով եւ լուսաւորելով, գորանալով գորացնելով, համոզեալով համոզեցնելով, յաղթելով Քրիստոսով, միեւնոյն ատեն թեւ ու թիկունք ըլլալով անոնց որ տկարութեան մէջ են եւ մխիթարութեան կը կարօտին: Բեղմնաւոր կեանք մըն է քրիստոնէական կեանքի նորոգութեան մէջ պտտող կեանքը, բազմակողմանի եւ լուսաւոր:

Բայց յայտնի է առաքեալին խօսքերէն, թէ այդ փոխուած կեանքը իր բոլոր կատարելութեամբը անմիջապէս չարտայայտուի: Այս պատճառաւ նա կ'ըսէ, «Ձեր մտքին նորոգութիւնովը նորոգուեցէք: Այս բառը իր մէջ ունի սքանչելի նշանակութիւններ, նորոգուիլ, կրկին կրկին նորոգուիլ ըսել է: Ամէն օր նոր քայլ առնելով ամէն օր մեծնալով, «Մեր ներսի մարդը օրէ օր կը նորոգուի»: Այսպէս, իւրաքանչիւր նորոգուելու հաւատացեալը քայլ մը աւելի կը մօտենայ իր սքանչելի նշանակեալին—Յիսուսի:

Վերջապէս, նորոգութիւն կը նշանակէ նաեւ կերպարանափոխութիւն, այլակերպութիւն, որ դարձեալ վայրկենական չէ, այլ աստիճանական: Հոս, Ս. Հոգին եւ հաւատացեալը մտերիմ յարաբերութեան մէջ են, զիրար լրացնող, ներդաշնակ գործունէութեան մը մէջ: Հաւատացեալը կը նուիրուի, Ս. Հոգին կը կնքէ, կ'օծէ զայն, հաւատացեալը կը յանձնէ իր կուռքերը մէկիկ մէկիկ, ինչպէս նաեւ իր սրտի մութ խցիկներուն բանալիները, եւ Ս. Հոգին կը սրբէ, կը մաքրէ, կ'այրէ: Հաւատացեալը իր բոլոր տգեղութիւնները կը նեղկայացնէ, Ս. Հոգին կը տաշէ, կը յղկէ եւ կը յարմարցնէ զայն իր Գլուխին:

Ու Ս. Հոգին անխոնջ կը շարժի մարդկային սրտի մթնոլորտին վրայ, մինչև որ անկէ Քրիստոսի փառաւոր պատկերը երեւան բերէ:

Ո՛վ հաւատացեալ, համբերութիւնով վազենք ասպարէզի ընթացքը, Յիսուսի նայելով, վասնզի երբ Անիկա յայտնուի, Անոր պէս պիտի ըլլանք, ուստի այս յոյսը ունենալով ինքզինքնիս մաքրենք, ինչպէս որ Անիկա մաքուր է:

ՀՈԳ. ԿԵԱՆՔ
.....

ԶՕՐՈՒԹԵԱՆ ՍՊԱՍԵԼ

Ամէն մէկ հաւատացեալ, տգէտ կամ գիտուն, երիտասարդ կամ ծեր, հարուստ կամ աղքատ, կրնայ այս գորութիւնը ստանալ: Ինչ որ ալ ըլլայ անոր միջավայրը կամ անցեալ փորձառութիւնը, այն վայրկեանին որ անիկա կը հասկընայ գորութիւն ստանալու պայմանները և զանոնք կը զործադրէ՝ կրնայ վերէն գորութեան տիրանալ:

Որչա՛փ փառք կուտամ Աստուծոյ Պօղոսի հետեւեալ խոնարհ խոստովանութեանը համար, «Ինծի որ ամէն սուրբերուն փոքրագոյնն եմ, այս շնորհքը տրուեցաւ, հեթանոսներուն մէջ Քրիստոսի անքննելի ճոխութիւնը քարոզելու եփես. Գ. 8:

Պօղոս վերէն գորութիւն ստացաւ հակառակ անոր որ իր անցեալ կեանքին մէջ հայհոյող, սուրբերը հալածող և փոստակար եղած էր: Եւ եթէ մենք հազար անգամ անարժան ըլլանք քան որ Պօղոս Առաքեալ ինքզինքը կ'ղգար, կրնանք տիրանալ վերէն գորութեան, եթէ կատարենք պայմանները:

Պէտէկոստէի օրուան պատահարները որքա՛ն գեղեցիկօրէն կ'ապացուցանեն մեր շեշտած իրողութիւնը: Ասկէ շատ օրեր չանցած Սուրբ Հոգիով պիտի մկրտուիք, սակայն Երուսաղէմ քաղաքին մէջ նստեցէք, մինչև վերէն գորութիւն առնէք վրանիդ, ըսաւ մեր Տէրը երկինք համբառնալէ առաջ:

Որչա՛փ մեծ ըլլալու էր այս պատուէրը լսող այրերուն և կիներուն զարմանքը: Ինչ պէտք ունէին աւելի գորութեան: Իրենք արդէն յարմարութիւն ունէին Քրիստոսի համար զործելու, կամ վկայելու:

Մէկ կամ երկու տարի առաջ Տէր Յիսուս իր առաներկու աշակերտները մէկտեղ կանչելով անոնց գորութիւն և իշխանութիւն տուաւ բոլոր ղեկերուն վրայ և ախտերը բժշկելու (Ղուկ. Թ. 1): Մատթէոս Աւետարանիչ կ'ըսէ, «Անոնց իշխանութիւն տուաւ պիղծ ոգիներու վրայ, որպէսզի զանոնք հանեն և ամէն ցաւերը և ամէն հիւանդութիւնները բժշկեն (Մատ. Ժ. 1): Տէր Յիսուս անոնց ըսաւ, «Հիւանդները բժշկեցէք, մեռելները յարուցէք, բորոտները մաքրեցէք, դեւերը հանեցէք, ձրի առեր էք ձրի տուէք» Մատ. Ժ. 8: Յիւրաւի անոնց իշխանութիւն տուաւ թըշնամիին բոլոր գորութեանը վրայ կոխկոտելու (Ղուկ. Ժ. 19): Բայց տակաւին բարձրագոյն զօ-

րութիւն մը կար զոր աշակերտները ակնկալելու էին:

Արդեօք այդ գորութիւնը մաքրարա՞ր զօրութիւն մըն էր: Բայց չէ՞ որ Քրիստոս իրենց ըսած էր, «Դուք մաքուր էք, բայց ոչ թէ ամէնգ» Յովհ. ԺԳ, 10: Արդեօք ի՞նչ էր այդ գորութիւնը:

Յիսուսի աշակերտները չէ թէ միայն հրաշքներ գործելու իշխանութիւն ունէին, այլ նաեւ մղուած էին Տէրոջը միջոցով դարձի եկած և Անոր զործակցելու կանչուած իրենց եղական փորձառութիւնով: Անոնք հիւանդի պատմութիւն մը ունէին պատմելիք, խիստ շահեկան և կարեւոր: Նոյն ինքն Տէրը օր մը անոնց ուշադրութիւնը դարձուց իրենց եղական առանձնաշնորհութեանը վրայ ըսելով, «Երանի այն աչքերուն որոնք ձեր տեսածները կը տեսնեն, քանզի կ'ըսեմ ձեզի, որ շատ մարգարէներ և թագաւորներ փափաքեցան ձեր տեսածները տեսնել, ու չտեսան, և ձեր լըսածները լսել ու չլսեցին» Ղուկ. Ժ. 23, 24: Այս խօսքերը ըսուեցան անոնց՝ Քրիստոսի մահէն և յարութենէն առաջ:

Աշակերտները ունեցած էին նաեւ հոգեւոր խորունկ փորձառութիւններ: Անոնք տարակուսած, վիճաբանած, սխալ հասկցած, ուրացած, Տէրը թողած, երեւութապէս հաւատքնին կորսնցուցած և զայթակղած էին խաչին սարսափը և Տէրոջը մահը տեսնելով: Յետոյ տեսած էին պարապ գերեզմանը և յարուցեալ Քրիստոսի յայտնուիլը: Ինչպէ՛ս տակն ու վրայ եղան անոնց ըզզացումները, ինչպէ՛ս սուրբ ուրախութեամբ լեցուեցան անոնց սիրտերը, երբ հասկցան թէ Անիկա կատարելապէս ներած էր իրենց անցեալը: Որքա՛ն արագ անցան քաղցր հաղորդակցութեան այն քառասուն օրերը, երբ իրենց կը մեկնէր Ս. Գիորքը. ուսուցման և ներշնչման ի՛նչ հիւանդի օրեր: Եւ այս ամենուն վրայ Անոր երկինք համբառնալը և հրեշտակներուն պատգամը, «Այսպէս պիտի գայ»:

Բայց, «Զօրութիւն պիտի առնէք», «Նստեցէք մինչև վերէն գորութիւն առնէք վրանիդ» խոստումները շարունակ կը հնչէին անոնց ականջներուն:

Եւ այսպէս «Սիրտերնին ուրախութեամբ և փառաբանութեամբ լեցուած, ասոնք ամէնը միաբանութեամբ միշտ աղօթք ու աղաչանք կ'ընէին կիներուն հետ, և Յիսուսի մօրը Մարիամի ու անոր եղբայրներուն հետ մէկտեղ» Գործ. Ա. 14: Մեծ ակնկալութեամբ գորութեան կ'ապասէին, այնպիսի մեծ գորութեան մը, որու մասին իրենց թշնամիներն անգամ վկայեցին ըսելով, «Աշխարհ-

հը տալին ու վրայ ըրին» Գործ. ԺԷ. 6:

Կրնայ ըլլալ թէ մենք ալ անցեալի մէջ հը-
րաշալի փորձառութիւններ ունեցեր ենք և մաս-
նաւոր չափով մը զօրութիւն ստանալով յաջո-
ղութիւններ ձեռք բերած ենք, սակայն տակա-
ւին վերէն զօրութեան լեցունութիւնը վայելած
չենք: Կրնայ ըլլալ որ նոյնիսկ անորոշ կերպով
աղօթած ենք որպէսզի Սուրբ Հոգիով լեցուինք:
Ոմանք կ'սպասեն մինչեւ որ կարենան Աստուծոյ
հետ առանձնանալ բլուրի մը վրայ, անտառի մը
մէջ կամ լճակի մը քով: Տէրը որոշապէս կը
պատուիրէ. «Երուսաղէմ քաղաքիս մէջ նստե-
ցէք, մինչեւ որ վերէն զօրութիւն առնէք վրա-
նիդ»: Եթէ տեղ մը կար որ անհնարին էր հո-
գեւոր օրհնութիւն առնել, այն ալ Երուսաղէմ քա-
ղաքն էր, ուր լեցունած էր խուռն բազմութիւն մը
երկինքի տակ եղած բոլոր ազգերէն Գործ. Բ. 6,
քանզի տօնի ժամանակ էր: Սակայն ճիշդ այդ
տեղն էր որ Տէրը ընտրած էր Իրեն հետեւողնե-
րուն վրայ Իր օրհնութիւնը դրկելու:

Քաղաքին մէջ, ուր լեզուներու եւ ձայներու
Բաբելոնական խառնակութիւն մը կը տիրէր: Այն
քաղաքը որ մի քանի շաբաթ առաջ խաչը հա-
նած էր իրեն Տէրը, եւ ուր կը գտնուէին Անոր
հանգէպ ատելութեամբ լեցուն իշխաններն ու
անառն չարասիրութեամբ համակուած քահա-
նաները: Կարծես թէ հակառակ Երուսաղէմի
փափաքին, Աստուծոյ Իր օրհնութիւնը կ'ուզէ թա-
փել անոր վրայ:

Կը տեսնէ՞ք արդեօք այս տկներեւ ճշմար-
տութիւնը թէ Աստուծոյ կարող է վերէն զօրու-
թիւն իջեցնել որեւէ մարդու վրայ, որեւէ տեղ,
եւ որեւէ պարագայի տակ: Վերէն զօրութիւնը
կ'իջնէ, եւ պէտք է որ իջնէ որեւէ անհատի վը-
րայ որ պատրաստ է կատարելու զայն ընդունե-
լու պայմանները:

Ի՞նչ միտքաբանութիւն է գիտնալ թէ Տէրը կըր-
նայ օրհնել զիս հոս, իմ գտնուած տեղիս մէջ:
Ինչ քաղաքի մէջ ալ որ հիմա կը գտնուիս սի-
րելի ընթերցող, կարող ես ճիշդ հիմա վերէն զօ-
րութիւն ընդունիլ:

Քաղաքին մէջ սպասելու երկրորդ պատճառ
մըն ալ կար: Վերէն գալիք զօրութիւնը ոչ թէ
միայն այն 120 ը պիտի լեցնէր, այլ քաղաքին
մէջ գտնուած հազարաւորներու օրհնութիւն
մը պիտի ըլլար: Տէրով պատուէրն էր որ Իր
անունով ապաշխարութիւն եւ մեղքի թողութիւն
քարոզուի Երուսաղէմէ սկսելով (Ղուկ. ԻԴ. 47):
Եթէ յիշեալ 120 ը Գալիլիայի լեռներուն վրայ,
կամ Տիբերիայի ծովուն եզերքը գտնուէին Սուրբ

Հոգիին գալստեան միջոցին, տառապող մարդկու-
թեան հետ շփումէ զուրս պիտի ըլլային բոլորո-
վին, մինչ իրենք վառուած էին կրակով, եւ թե-
րեւս պիտի փորձուէին իրենց գտնուած տեղը
մնալ խորհելով թէ Սուրբ Հոգիին գալուստը կա-
խում ունէր առանձին վայրերէ: Սիմոն Պետրոս
թերեւս կրկին ազաղակէր. «Աղէկ է որ հոս կե-
նանք, մեծ տաճար մը շինենք եւ վայելենք այս
պարգեւը»: Արդեօք շատ մը անհատներ եւ նոյն
իսկ ժողովուրդներ այսպէս չէն ընէր: Յիշէ թէ
վերէն զօրութիւնը կը տրուի միմիայն այն պայ-
մանով որ զայն չպահենք, այլ թողունք որ ու-
րիշներուն ալ անցնի: Եթէ կ'ուզենք որ այդ զօ-
րութիւնը շարունակ հոսի մեր էութեան խորերը,
ճամբայ բանալու ենք նաեւ անոր արտահոսման:
Սուրբ Հոգին երբեք չտրուիր մեզի որպէսզի
մենք միայն սուրբ եւ երջանիկ ըլլանք:

Այո, սպասելու յարմարագոյն տեղը քաղաքն
էր. ուրեմն հոս կ'սպասեն: Սակայն ո՞րոնք են
սպասողները: Գոնէ 500 եղբայրներ կային որ Տէ-
րը կը սիրէին եւ զԱյն տեսած էին Իր յարու-
թենէն յետոյ (Ա. Կոր. ԺԵ. 6): Սակայն վերնա-
տան մէջ միայն 120 աշակերտներ կային, մէջն
ըլլալով նաեւ կիներ և թերեւս փոքրիկներ: Այն-
պէս կ'երեւի թէ միայն չորսէն մէկը սպասեց:
Արդեօք կարելի՞ էր որ միւսները խոստումէն
լուր չունենային: Կարելի չթուիր նաեւ թէ ա-
նոնք արժէք չընծայեցին զօրութեան պարգեւին:
Թերեւս այնքան վառուած էին Համբարձման լու-
րը տարածելու եռանդով որ սպասելու պատ-
ուէրին մտիկ չըրին: Մենք չենք գիտեր թէ ին-
չո՞ւ Սուրբ Հոգիին գալստեան միջոցին անոնք
բացակայ էին: Սակայն գիտենք թէ Աստուծոյ ա-
չառութիւն չընէր եւ զօրութեան խոստումը ա-
մենուն համար է, այրերու, կիներու կամ փոք-
րիկներու: Եւ կը հաւատանք թէ, «նստեցէք մին-
չեւ որ վերէն զօրութիւն առնէք վրանիդ» հրա-
մանը ամէն անոնց համար է որ կը փափաքին
Տէրով ծառայել: Սուրբ Հոգին քեզի, ինծի և ա-
մէն մէկ հաւատացեալի խոստացուած է եւ ոչ
թէ միայն մէկ քանի առանձնաշնորհեալներու,
ինչպէս կարգ մը քրիստոնեաներ մտածել կը
թուին: Մտիկ ըրէք Պետրոս առաքեալին: Պէն-
տէկոստէին օրը անոր սիրտը եզակիանօրէն վառ-
ուած էր Հոգւոյն կրակովը, հոգին տոչորուած եւ
շրթունքները ներշնչուած հոգեյոյզ պատգամո-
վը, «Ապաշխարեցէք, ու ձեզմէ ամէն մէկը թող
մկրտուի Յիսուս Քրիստոսի անունով մեղքերու
թողութեան համար եւ Հոգւոյն Սրբոյ պարգեւը
պիտի ընդունիք, փասնզի խոստմունքը ձեզի է

ու ձեր որդիներուն եւ ամէն հեռու եղողներուն զարոնք մեր Տէր Աստուածը պիտի կ'անչէ», կ'ազաղակէ անիկա: (Գործ. Բ. 38, 39):

«Բայց հիմա Քրիստոս Յիսուսով մենք որ ատեն մը հեռաւոր էինք, մերձաւոր եղանք Քրիստոսի արիւնովը» Եփես. Բ. 13: Մեզի համար է խոստումը, մեզի համար է զօրութիւնը: Ստացած ենք զայն: Եթէ ստացած չենք, ի՞նչ է արդեօք պատճառը:

Կ'աղօթեմ որ Սուրբ Հոգին Աստուած այնպէս առաջնորդէ իմ խորհուրդներու եւ գրիչիս եւ այնպէս պարզ եւ յստակ կերպով ներկայացնէ այս պատգամը որ ամենատգէտ եւ ամենաբխամիտ անհատ մ'անգամ կարենայ զայն հասկնալ: Աստուած կը բաղձայ որ ես, զուն եւ ամէն մէկ հաւատացեալ զօրութեամբ լեցուած քրիստոնեայ մ'ըլլանք:

Ուրիշներու տաղանդներուն եւ ձիրքերուն չցանկանք: Մեծ մտաւորականներ յաճախ կը փորձուին հպարտանալ եւ տարակուսիլ: Միթէ նուազ տաղանդաւորներու մէջ չէ՞ որ Ս. Հոգիին պայծառութիւնը աւելի փայլուն կերպով կ'երևի: Բանգի այն ատեն որոշապէս յայտնի կ'ընէ թէ «Ոչ թէ մենք ինքնիրենիս բաւական ենք, հապա մեր բաւականութիւնը Աստուծմէ է» Բ. Կոր. Գ. 5: Հոգեղէն անօթներու մէջ գտնուած այս գանձը յիրաւի թանկարժէք գանձ մըն է: Եթէ աշակերտները մեծ գիտնականներ եղած ըլլային, Պէնտէկոստէի օրը ոչ մէկը պիտի զարմանար անոնց օտար լեզուներ խօսելուն վրայ: Իշխաններն ու մեծամեծները ոչ թէ միայն կը զարմանային Պետրոսի եւ Յովհաննէսի համարձակութեանը վրայ, այլ մանաւանդ որ անոնք անուս եւ տգէտ մարդիկ էին: Անուս անհատներու մէջ այդպիսի զօրութեան մը յայտնուիլը տեսնելով կը զարմանային. եւ «Իմացան որ անոնք Յիսուսի հետ էին» Գործ. Գ. 13: Անոնց Յիսուսի հետ ունեցած յարաբերութիւնը միայն կրնար բացատրել այդպիսի զօրութեան մը յայտնութիւնը: Ոչ թէ Սուրբ Հոգիին՝ այլ Յիսուսի գործելն էր որ անոնք կը տեսնէին: Անուս ենք: Տգէտ ենք: Տարբերութիւն չընենք: Խոստումը մեզի համար ալ է եւ Քրիստոս մեր մէջը ա'լ աւելի պիտի փառաւորուի: Մեր զօրութեան պակասը երբեք չվերագրենք մեր անարժանութեան, մեր շրջանակին կամ մեր դիրքին: «Նստեցէք... քաղաքիս մէջ...»:

Միայն մէկ խօսք մըն ալ կ'ուզեմ յարել ցուցնելէ առաջ թէ ոչ մեր անցեալի անյաջողութիւնը, եւ ոչ ալ ուրիշներու սխալները կա-

րող են մեզմէ յափշտակել զօրութեան խոստումը:

Երուսաղէմ: Քաղաք մը «Որ կ'սպաննէր մարգարէները, եւ կը քարկոծէր Աստուծոյ զրկածները»: Սակայն Երուսաղէմի մէջ անգամ արթնութիւն յառաջ եկաւ, որովհետեւ մի քանի աշակերտներ հոն սպասեցին եւ աղօթեցին: Ամենադժուարին եւ ամենէն ամբարիշտ քաղաքին մէջ իսկ կրնայ արթնութիւն ծագիլ եթէ հոն վերէն զօրութիւն ստացող աշակերտներ գտնուին: Սակայն առանց այդ զօրութեան ամենէն առանձնաշնորհեալ քաղաքն անգամ չի կրնար օրհնուիլ:

ԱՐՏՕՆՈՒԱԾ ԹԷ ԱՐԳԻԼՈՒԱԾ

Այս բանը արտօնուած է. ասիկա չէ՞: Ասիկա աշխարհայի՞ն է, ասիկա քրիստոնէական է: Կարելի՞ է մասնակցիլ այսինչ ընկերութեան, հաստատել այսինչ հաղորդակցութիւնը, հետեւիլ այսինչ ուսմունքին:

Այս հարցումը որդիին բերնին մէջ կը նշանակէ թէ ի՞նչ ընելու եմ բոլոր սիրտս հօրս յատկացնելու համար, բայց ստրուկին բերնին մէջ՝ մինչեւ ո՛ւր կրնամ ուզածիս պէս հետեւիլ սրտիս ցանկութիւններուն՝ առանց տէրս զայրացնելու:

Տխո՛ւր եւ ունա՛յն շարժառիթ գրգռման:

Ի՞նչ է այս անվերջ սակարկութիւնը մարդուն եւ Աստուծոյ միջեւ: Ո՞վ է այն քրիստոնեան որ մանրակրկիտօրէն զբաղուած է Աստուծոյ եւ իր բաժինը փնտռելու եւ իրենը չափազանց քիչ գտնելու երկիւղով լեցուած: Ո՞վ է այն հաւատացեալը որ կը յաւակնի երկուքի բաժնուիլ, իբր թէ բաւական չըլլար որ աշխարհայինը բոլորովին աշխարհային ըլլար եւ հաւատացեալը՝ բոլորովին հաւատացեալ:

Ո՞վ է այն մարդը որ երկու սիրտ ունի, մէկը Աստուծոյ համար, իսկ միւսը աշխարհի: Ո՞րն է այն անձնուրացութիւնը որ պայմանաւորումներ կ'ընէ, իրեն պահեստ կ'առնէ, իր գոհողութեանց գին կը դնէ:

Ո՛հ, սէրը լաւագոյն խղճագիրն է: Սէրը անմիջապէս կը վերցնէ դժուարութիւնը: Ամէն բան Աստուծոյ համար եւ ոչինչ ինծի համար: Ահա իր նշանաբանը:

Ամէն բան Աստուծոյ համար, բաւ է որ Աստուած իմ ըլլայ:

Յայնժամ թող չքանայ կամ նուաճի կեանքս, ընդարձակի կամ կրճատի գործունէութիւնս, հա-

ճութեան համապատասխանէ կամ հակառէ: Եթէ Աստուած ունիմ, միաժամանակ ամէն ինչ ունիմ: Անոր է որ կ'ուզեմ ծառայել, Անոր է որ կը տենչամ հաճելի ըլլալ, փնայեալը անկարեւոր է:

Ա. ՎԻՆԷ

Թարգ. Տ. ԳԱՐԱՄԱՆՈՒԿԵԱՆ

ԿԸ ՓԱՓԱՔԷԻ ԱՐՄՏԻՔԴ ՈՒՆԵՆԱԼ ՀԱՅՐԻԿ

Հարուստ կալուածատէր մը, որուն ամբարները արմտիքով լեցուն էին, սովոր էր իր աղօթքներուն մէջ միշտ աղքատները յիշել: Բայց երբ չքաւոր մը իրեն մօտենալու ըլլար քիչ մը արմտիք ուզելու, ընդհանրապէս կ'ըսէր, «Այ չունիմ, ինչ որ ունիմ մեզի հազիւ կը բաւէ»:

Օր մը, երբ ինքը սովորութեան համաձայն, առտուան աղօթքին մէջ դարձեալ աղքատներու համար կը բարեխօսէր, անոր պզտիկ որդին յանկարծ բացագանչեց, «Կը փափաքէի քու արմտիքդ ունենալ, Հայրիկ»:

— Ինչո՞ւ համար որդեակ իմ, գոչեց զարմացումով:

— Աղքատներուն համար քու ըրած աղօթքդ լսելի ընել տալու, Հայրիկ:

Հայրը ամօթահար իր շրթները խածաւ. որդւոյն խօսքերը նետի պէս իր սիրտը ծակած էին: Այդ օրուրնէ սկսեալ չքաւորներու համար աւելի օգնութիւն ըրաւ քան առաջ:

Քրիստոնեաներէն որքան շատեր այս մարդուն նման միայն աղօթողներ են եւ սակայն ոչ գործնական աղօթողներ: Թերեւս «Բանքեր» ի ընթերցողներուն մէջ ալ այդպիսիներ կան: Սորվինք այս իրական պատմութենէն: Մանկան մը զմեզ զգաստացնելէն առաջ սորվինք թէ մեր ունեցածները ամէն ալ լուսոյ Հօրմէն պարտք տրուած են մեզ եւ մենք միայն տնտեսներ ենք ատոնց, մեր իրական եւ փնայուն ստացուածքը հոս չէ, այլ երկինքն է:

Այս երկրի բարիքները ուստի որպէս կուռք գործածել եւ սերտօրէն անոնց փարիլ շիտակ չէ եւ մեծ վտանգներու կը տանի: Ստացուածքին իսկական նպատակն է զմեզ վարժեցնել բարեգործութեան մէջ, եւ սքանչելի խոստում ունի թէ, «Բարերար անձը պիտի գերնայ եւ ան որ կ'ողոգէ, ինք ալ պիտի ողորդուի» Առակ. ԺԱ. 27: Առաքեալը կ'ըսէ, «Ան որ խնայելով կը սերմանէ խնայելով պիտի հնձէ, ու ան որ առատութիւնով կը սերմանէ, առատութիւնով պիտի հնձէ»: Բ. Կորնթ. Թ. 6: «Մարդ կայ որ

իր ստացուածքը ցրուելով կ'աւելցնէ, ու մարդ կայ որ չափէ դուրս կը խնայէ, բայց կարօտութեան կը հասնի» Առակ. ԺԱ. 26: Արդ, բարիք գործելէ չձանձրանաք, քանզի յարմար ժամանակին պիտի հնձենք թէ որ չթուլնանք:

Տէրոջը պատիւ ըրէ քու ստացուածքէդ եւ քու բոլոր բերքերուդ երախայրիներէն: Առ. Գ. 9:

Որովհետեւ երկրին մէջէն աղքատ պակաս պիտի չըլլայ, անոր համար քեզի կը պատուիրեմ ու կ'ըսեմ, քու երկրիդ մէջ եղած աղքատ ու չքաւոր եղբորդ ձեռքդ բաց ըլլայ:

Աղօթէ որ Տէրը զքեզ տալու շնորհքին մէջ աւելցնէ, սիրելի ընթերցող:

ՃՇՄԱՐԻՏ ԱՊԱՇԽԱՐՈՒԹԻՒՆ

Ապաշխարեցէք... մեղքերու թողութեան համար: Գործ. Բ. 38

Ապաշխարութիւնը աղօթք մըն է, եւ մեղքերու թողութիւնը անոր պատասխանը: Ապաշխարութեան աղօթքը խոնարհութեան եւ խոստովանութեան հետ միասին նաեւ խնդրուածք մըն է: Ինչպէս մանուկ մը իր մօրմէն բան մը կը խնդրէ, մենք ալ ապաշխարած ատեննիս Աստուծմէ բան մը, այսինքն մեր մեղքերուն թողութիւնը կը խնդրենք: Արդ, եթէ մանուկը զայ եւ ըսէ, «Մայրիկ, ինձի հաց տուր», և առանց սպասելու եւ հացը առնելու եթէ վազէ ետ իր խաղին երթայ, իր անօթութիւնը կ'ըլլայ. անոր զաւ եւ խնդրելը պարապ յոգնութիւն չըլլար: Այսպէս ալ է երբ մէկը կ'ապաշխարէ եւ առանց Աստուծմէ իր մեղքերուն թողութիւնը առնելու կ'անցնի կ'երթայ: Անոր ապաշխարութեան աղօթքը պարապ զացած չըլլար: Մանուկը իր խաղին մէջ յանկարծ զգաց թէ անօթի է, եկաւ հաց ուզեց, բայց իր միտքն ու սիրտը այնքան լեցուած էր իր խաղով, որ հացը առնելու չսպասեց, իր անօթի ըլլալը մոռցաւ եւ ետ իր խաղին վազեց: Մարդիկ ալ յաճախ այսպէս են: Աշխարհային զբաղմունքներուն, խաղերուն մէջ յանկարծ կ'զգան թէ իրենց հոգին անօթի է: Քարոզ մը կ'ազդէ իրենց, կամ Սուրբ Դիւքէն համար մը, երբեմն մէկ բառ միայն—Աստուած, երկինք, դժոխք են: Շատ անգամ հիւանդութիւն մը, կամ սիրելիի մը մահը կը ցնցէ զիրենք: Կ'զգան թէ մինչեւ այն ատեն իրենց հոգին երեսի վրայ ձգած էին: Եւ առաջին բանը որ կ'ընեն, ապաշխարել է. իրենց այս անհոգութեան եւ ուրիշ շատ մը մեղքերուն համար թողութիւն խնդրել: Բայց անոնց սիրտը ու միտ-

քը աշխարհի այդ խաղերով լեցուած ըլլալուն, առանց պատասխան առնելու կը վերադառնան իրենց հին կեանքին, հին խաղերուն մեղքերնուն վրայ մեղք աւելցնելու:

Ապաշխարութիւնը պէտք է ըլլայ հաստատ որոշումով մը խոստովանուած մեղքը մէկդի ձը գելով: Ապաշխարութիւնը պէտք է ըլլայ թողութիւն եւ ներում ստանալու ճշմարիտ եւ խորունկ ծարաւով եւ անթուրթիւնով մը: Նորէն մանկանց կեանքէն օրինակ մը առնենք: Երբեմն կը պատահի որ մանուկ մը յանկարծ կ'ըսէ, «Մայրիկ, հաց կ'ուզեմ»: Մայրը կ'երթայ եւ հաց բերելով կ'ըսէ, «Առ տղաս, հաց»: Տըղան կ'ըսէ, «Ոչ, մայրիկ, ջուր կ'ուզեմ»: Մայրը կ'ըսէ, «Դնչ ուզելդ դուն ալ չես գիտեր», եւ կ'երթայ ու ջուր կը բերէ: Տղան հագիւ ջուրէն ալ մէկ ումպ մը խմած, գաւաթը ետ կուտայ: Այսպէս ալ շատեր, առանց «Անթի ու ծարաւ ըլլալու արդարութեան», առանց իրենց մեղքերը, անոնց ահաւորութիւնը եւ ահաւոր վախճանը եղող յուստնակաւ կրալը նկատի առնելու, թուրթակի պէս կ'ազօթեն: «Ով Աստուած, իմ մեղքերս ներէ»: Եւ զարմանալի չէ որ իրենց այդ խնդրածը, այսինքն իրենց մեղքերուն թողութիւնը չեն առնել: Եւ կը շարունակեն իրենց մեղսալից կեանքը: Այսպէս ազօթել եւ այսպէս ապրիլ, զԱստուած ծաղրելու փորձ մըն է (հոգ չէ թէ երբեմն անգիտակցաբար), ու նաեւ ինքզինքը խաբել (վստահօրէն գիտակցաբար): Ո՛հ թէ Աստուած արթնցնէր այսպիսի հոգիները մեր ընթերցողներուն մէջէն: «Ապաշխարեցէք... մեղքերու թողութեան համար»:

Վ. Ս.

«ՊԵՏԻ Է ՁԵԶԻ ՆՈՐԷՆ ԾՆԱՆԻԼ»

Տօքթոր Սքօֆիլտ կը պատմէ թէ օր մը իր գրասենեակը մարդ մը մտաւ: Մարդ մը որուն մարմինը ալյանդակ մսի կտոր մը դարձեր էր: Անիկա ժամանակին մեծ օրաթերթի մը խմբագիրը եղած էր: սքանչելի տաղանդի տէր եւ փայլուն ու ապահով դիրք մը սննդաւուն, ինքզինքը խմիչքի տուած էր: Քանի սարսափելի մոլութիւնը զինք գերի կ'ընէր՝ նա կամաց կամաց սահելով իսկական դժոխային վիճակի մը իջած էր: Եւ հիմա իր քայքայուած թշուառութեան մէջ հոն կը կենար: «Ի՞նչ պէտք էր ըսել անոր», կը հարցնէ Տօք. Սքօֆիլտ: «Ես անոր չէի կրնար ըսել, յիշէ թէ մարդ մըն էս եւ մարդու պէս ապրէ», որովհետեւ անոր մէջ մարդկութենէ ոչինչ

կը մնար: Անոր ըսի, «Կրնաս նորէն ծնանիլ, կըրնաս Աստուածային բնութեան հաղորդ ըլլալ եւ Աստուծոյ գաւակ եւ ժառանգորդ դառնալ»: Յայնժամ նա ծունկերուն վրայ ինկաւ եւ գոչեց— «Աստուած իմ, կարելի՞ է որ ինձ նման շուն մը Բու գաւակդ դառնայ»: Նա իր սիրտը Աստուծոյ առջեւ թափելով ինքզինքը Բրիտանիայի յանձնեց: Երբեք պիտի չմոռնամ իր այլակերպած դէմքը, ոչ ալ իր սքանչելի լըջութիւնը եւ իր աներկիւղ կեցուածքը երբ ձեռքս բռնելով ըսաւ, «Հիմա ես Աստուծոյ մէկ գաւակն եմ»:

ԱՅՍՕՐՈՒԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ

Ամէն կողմէն կը հարցուի, «Ի՞նչ է եղեր այսօրուան եկեղեցիին»: Ինչո՞ւ ան կորսնցուցած է իր հին աստեղծութիւնը: Ինչո՞ւ ան չի կրնար զօրաւոր ազդեցութիւն մը բանեցնել արգիւելու այն սոսկալի «ճրագործութեան հոսանքը որ ամբողջ երկիրը պաշարած է:

Եկեղեցին պէտք էր այսօր առաջուրնէ աւելի զօրաւոր ըլլար: Քանզի հիմա աւելի մեծ թիւով անդամներ ունի: Անոր միացեալ հարստութիւնը աւելի մեծ է: Աւելի շատ եւ աւելի գեղեցիկ եկեղեցիի շէնքեր ունի: Իր գանձին աւելի դրամ կը տրուի: Հիմա աւելի «Կրօնական գործունէութիւն» կայ: Գործը յառաջ մղելու համար աւելի մեծ թիւով մարդիկ կը մասնակցին: Երիտասարդներու դաստիարակութեան աւելի հոգ կը տարուի:

Եկեղեցին մեծ ծախքով դպրոցներ եւ ճեմարաններ կը կառուցանէ, ուր կը դաստիարակուին եւ կը կրթուին առաջնորդներ, եւ նա ունի բարձրագոյն դաստիարակութիւն եւ կրթութիւն ունեցող առաջնորդներու այնպիսի մեծ թիւ մը զոր ասկէ առաջ բնաւ ունեցած չէր: Սակայն հակառակ այս բոլորին, երբ ակնարկ մը ձգենք մեր չորս դին եւ տեսնենք այն զարհուրելի ամբարտաւանութիւնը որ հիմա գոյութիւն ունի, կըստիպուինք հարցնել, «Ի՞նչ է եղեր այսօրուան եկեղեցիին»:

Արդ, որո՞նք են վերը ակնարկուած ամբարշտութեան պատճառները, քանի որ պարագաները աւելի նպաստաւոր են: Պէտք չէ որ Քրիստոսի հոգին եւ վարդապետութիւնը հիմա աւելի ուժգին յայտնուի քան թէ առաջ: Քանի որ եկեղեցին բարոյականի հակիչն է, չէ՞նք կրնար առաջուանէն աւելի բարձր բարոյականութիւն ակնկալել: Սակայն երբ ուշադրութեամբ քննենք

ծիշդ հակառակը պիտի գտնենք: Տէրունական օրուան սրբապղծութիւնը, պարը, հայհոյութիւնը, գողութիւնն ու աւազակութիւնը, սուտը, մարդասպանութիւնը, արբեցութիւնն ու խաղամոլութիւնը, եւ ուրիշ շատ մեղքեր ներկայ սերունդին սիրտը կը կրծեն ու ընկերութեան հիմերը կը քանդեն: Եւ եկեղեցին անգոր է պատերազմելու ատոնց դէմ: Ի՞նչ է պատճառը: Ի՞նչ է եղեր այսօրուան եկեղեցիին: Ջանա՛նք պատասխանել այս հարցին:

Ա.

ԾԱՌԱՅՈՒԹԻՒՆԻՆ ՆՈՐԱԶԵԻՈՒԹԵԱՆ ԱՍՏՈՒԾՈՅՆ

«Ինծիմէ զատ ուրիշ աստուածներ չունենաս»

Իսրայէլի որդւոց համար, որոնք եկեղեցիին խորհրդապատկերն էին, սովորական յանցանք մըն էր շարունակաբար ճշմարիտ Աստուծէն դառնալ եւ ուրիշ աստուածներու ծառայել: Երբ ասանկ կ'ընէին, Աստուծոյ օրհնութիւնը իրենցմէ քաշուելով, Անոր պատժող ձեռքը կ'երկնայար իրենց վրայ, մինչեւ որ իրենք ապաշխարէին եւ դարձի դային:

Ասիկա ճշմարիտ է այսօր եկեղեցիին համար: Վաղեմի Իսրայէլացիին նման եկեղեցիին ալ Աստուծոյ այսօրուան ընտրեալ ժողովուրդը, դարձաւ ծառայելու ուրիշ աստուածներու, ե ինչպէս որ Աստուծոյ պատժող ձեռքը անոնց վրայ էր անոնց անհնազանդութեանը համար, անանկ ալ է այսօր Իր ժողովուրդին վրայ: «Ահա Տէրը ձեռքը փրկելէն չկարճցաւ, ու Անոր ականջը լսելէն չծանրացաւ, հապա ձեր ու ձեր Աստուծոյն մէջտեղ բաժանում ձգողը ձեր անօրէնութիւնները եղան, եւ ձեր մեղքերը Անոր երեսը ձեզմէ ծածկեցին որ չլսէ» Եսայ. Ծժ. 1, 2: Ինչպէս հին ատենները Աստուծոյ ականջը անոնց համար գոցուեցաւ, այսօր ալ մեզի համար գոցուած է: Ասիկա եկեղեցիին անդամալոյժ վիճակը կը ցուցնէ:

Հիմա ոմանք կրնան խորհիլ թէ սուտ աստուածներուն ծառայելու օրերը անցած են, եւ եկեղեցւոյ անդամները, որոնք Աստուծոյ զաւակ ըլլալ կ'ենթադրուին՝ կուռքերու ծառայելու մեծ մեղքով յանցաւոր չեն: Կրնայ հարցուիլ թէ կա՞ն ուրիշ աստուածներ: Կը յիշեմ թէ մէկը զիս կը դատէր երբոր ես կ'ըսէի թէ մէկէ աւելի աստուածներ կան: Եթէ չկայ մէկէ աւելի աստուած, այն ատեն տասնաբանեային առաջին օրէնքը պարապ քան է: Եթէ միայն մէկ Աստուած կայ, ինչո՞ւ ուրեմն Սուրբ Գիրքը կ'ըսէ, «Ինծիմէ զատ ուրիշ աստուածներ չունենաս»: Անշուշտ ասիկա կը ցուցնէ թէ մէկէ աւելի աստուածներ ըլլալու

են: Յետոյ. «Ձեր անձերուն զգուշութիւն ըրէք, չըլլայ որ ձեր սիրտը խաբուի, ու դուք շիտակ ճամբայէն խոտորելով՝ օտար աստուածները պաշտէք ու անոնց երկրպագութիւն ընէք»: Բ. Օրին. ԺԱ. 46: Ուրիշ տեղ մըն ալ կ'ըսէ, «Այս աշխարհիս աստուածը անհաւատներուն միտքերը կուրցուց» Բ. Կոր. Դ. 4: Ուստի կայ մէկ ճշմարիտ Աստուած, Արարիչ ամէն բանի, եւ կան նաեւ սուտ աստուածներ: Այս աշխարհիս աստուածը բազում—աստուած է, բայց բոլորը մէկ միութիւն կը կազմեն: Կայ հաճոյքի աստուածը, որուն կը ծառայեն մեր ժողովուրդէն շատեր: Յետոյ, նորաձեւութեան աստուածը: Այս կեանքի մէջ շատ բաներու կը հանդիպինք, երբ ընտրելու ենք հնազանդիլ ճշմարիտ Աստուծոյն, մեր սիրելի Հօր, կամ աս աշխարհիս աստուծոյն՝ Սատանայի: Հագուստեղէնի եւ հագուելու խնդրոյն մէջ որո՞ւ հնազանդելու ենք: Ա՛հ այս խնդրոյն մէջ ընտրեալներն անգամ ականջնին գոցած են երկնաւոր Հօր առջեւ եւ հնազանդ են աշխարհիս նորաձեւութեան աստուծոյն: Միտքդ բեր Սուրբ Գիրքին խօսքը որ կ'ըսէ թէ, որուն որ կը հնազանդինք, անոր ծառաներն ենք: Մեր օրհնեալ Տէրը Իր խօսքերուն մէջ նկատած է մեր հագուելիքը, իսկ նորաձեւութեան աստուածը տարբեր տեսակ կը նկարագրէ: Արդ, մէկը կամ միւրը մերժելու ենք: Քննենք այս օրերու հագուստները եւ տեսնենք թէ անոնք կը նմանին Սուրբ Գրոց մէջ տրուած օրինակին:

Ակներեւ ճշմարտութիւն մըն է թէ հագուստին զլխաւոր նպատակը մերկութիւնը ծածկելն է: Այսուհանդերձ կան մարդիկ եւ կիներ որոնք աշխարհի ամէն կողմը զաղափար կը տարածեն թէ պէտք չկայ հագուստի, եթէ ոչ միայն մեզ տաք պահելու եւ մեր մարմինները զարդարելու համար: Ընթացիկ պարբերաթերթէ մը կտրուած թուղթի կտոր մը ունիմ, որուն մէջ կ'ըսուի թէ նշանաւոր բնախոյզ Մր. Թամսըն Սէթըն իրեն ի պատիւ տրուած հացկերոյթի ատեն յայտարարեց թէ, մարդկային բնազդը կը բողոքէ հագուստի դէմ, եւ այն բնազդը ապահով առաջնորդ մըն է, քանզի դատումը միշտ հիմնուած է միջավայրին վրայ: Նաեւ յայտնեց թէ պատմութեան ամենաապականեալ շրջաններն էին՝ արանց եւ կանանց ամենաշատ հագուստ հագած ատենները: Այն ատենէն ի վեր հագուստի քանակը շարունակաբար նուազեցաւ եւ փոխադարձաբար բարոյականութիւնը աւելցաւ: Այս զաղափարին շիտակ կամ սխալ ըլլալը արդէն ներկայ ժամանակուան բարոյական կեանքը ցոյց

կուտայ:

Ձեզի ըսեմ թէ այս աղանդը հակառակ է Ս. Գրոց վարդապետութեան եւ եթէ ցեղը հետեւի անոր՝ պիտի գահավիժի անհամեստ անբարոյականութեան եւ մեղքի անդունդին մէջ: Հագուստի վերջին ձևերը թաւաճն Սէթընի գաղափարին համեմատ ձեւաւորուած է, եւ Աստուծոյ ու Սբ. Գրոց գաղափարէն այնչափ հեռու է որքան որ արեւելքը արեւմուտքէն: Կը հաւատամ թէ եթէ քրիստոնեաներուն շխտակ տեղեկութիւն տրուելու ըլլայ, անոնք Աստուծոյ Խօսքին պիտի փափին:

Ընդհանուր նորաձեւութեան անպարկեշտ եւ անվայել հագուստի ձեւերը սխալ եւ մեղսալից են: Եւ երբ այսպէս կ'ըսեմ, վստահ եմ թէ կը հասկնաս ինչ ըսել կ'ուզեմ: Եթէ հիմա կարելի ըլլայ մանրամասնօրէն նկարագրել թէ ինչպէս կը շինուին մեր կիներուն հագուստները, եւ կիներուն մարմիններուն ո՛ր մասերը զուրս ցցելով մարդոց աչքերուն կը ցուցադրուին՝ այն ատեն ամօթխածութեան կարմրութիւնը պիտի սքօղէ ամէն պարկեշտ կնոջ երեսը: Ասիկա ինքնին ամենամեծ նախատինք մըն է հանդէպ կանանց համեստութեան:

Չորս ամբաստանութիւն ունիմ նորաձեւութեան անպարկեշտ եւ անվայել հագուստներու դէմ:

1) Անոնք ուղղակի կը բռնաբարեն Աստուծոյ Խօսքը, ուր կնիկներուն ազդարարուած է որ «Պարկեշտութեամբ ինքզինքնին զարդարեն» Ա. Տիմ. Բ. 9: Եթէ ուրիշ պատճառ չըլլայ ալ, ասիկա պէտք է բաւ համարուի քրիստոնեայ կիներուն: Երբ աշխարհին կը վկայենք թէ մենք նորէն ծնած ենք եւ հիմա աշխարհէ չենք հապա Աստուծոյ որդիներ, ու Յիսուս Քրիստոսի հետեւորդները, կը խոստովանինք Սբ. Գիրքը ընդունիլ իբր կանոն մեր հաւատքին եւ կեանքին:

2) Հագուստի այս խնդրին մէջ աշխարհի հետեւելով, աշխարհին նմանած կ'ըլլանք, քանզի նմանիլ բառը կը նշանակէ՝ հետեւիլ կամ անոր պէս ըլլալ: Սբ. Գիրքը քրիստոնեային կ'ըսէ. «Մի կերպարանիք այս աշխարհի կերպարանքովը»: 2է թէ միայն աշխարհին՝ հապա նաեւ աշխարհի ամենաազնիւ եւ ինկած տարրին կը հետեւինք, վասնզի նորաձեւութիւնը անոնցմէ ծագում առած է:

3) Այս նորաձեւութիւնները անբարոյական ազդեցութիւն ունին մարդոց վրայ:

Դուք մայրեր, որ թոյլ կուտաք ձեր աղջիկներուն ասանկ թեթեւ եւ քարակ հագուելու, ե-

թէ կրնայիք լսել այն կոշտ դիտողութիւնները որ ամբարիշտ մարդիկ կ'ընեն, եւ տեսնէիք անոնց աչքերուն մէջ եռացող ցանկութիւնները ձեր գաւկին հանդէպ, այն ատեն աղէկ պիտի հասկնայիք թէ ինչ ըսել կ'ուզեմ:

Իրողութիւն է թէ կնիկներ այրերը կրնան մոլորեցնել իրենց մարմինները ցուցադրելով: Ստորերկրեայ կնիկներ ասկէ աղէկ ճամբայ մը չեն դիտեր իրենց դործերը յաջողցնելու համար: Բայց հիմա ամէնն ալ նոյնպէս կը հագուին եւ տարբերութիւն չտեսնուիր: Մի քանի տարի առաջ երբ այս պոռնկական հագուստները սկսան հագնիլ մեր երկրին առաքինի կիները, լսեցի որ երիտասարդ մը դատարան քաշուած էր, նշանաւոր ընտանիքի վերաբերող երիտասարդ աղջիկ մը նախատած ըլլալուն համար: Երիտասարդը իրեն վերագրուած խօսքը ըսելը ընդունեց, բայց նաեւ աւելցուց, «Այո, Տէր դատաւոր, ես անոր մօտեցայ այդ խօսքերով, բայց խորհեցայ թէ անանկ հագուող մէկը չպիտի զգացուէր այդ խօսքերէն»: Որովհետեւ աղջիկը ստորերկրեայ կիներուն պէս հագուած էր, ու երիտասարդը կարծեց թէ նա անոնցմէ մին էր:

Ծանօթ հոգեւոր թերթերէն մին լուրջ կոչ մը հրատարակեց քրիստոնեաներուն, ընդհանուր հոգեւոր արթնութեան մը համար աղօթելու, յիշելով այն իրողութիւնը թէ 1857ի մեծ արթնութիւնը յառաջ եկած էր Աստուծոյ ժողովուրդին միացեալ աղօթելովը: Այս կոչին՝ երիտասարդին մէկը պատասխան մը գրեց հետեւեալ կերպով թէ, արդեօք Աստուած պիտի օրհնէ՞ եկեղեցին, երբ իր ժողովուրդը իր մէջ զանազան մեղքերուն մասին այսքան քիչ զգացում ունի: «Նայեցէք մեր մայրերուն եւ քոյրերուն», ըսաւ ան, «միջպէս կը հագուին»: Եթէ կին մը 1857ին անանկ հագուելու ըլլար՝ անպարկեշտ ցուցադրութեան պատճառաւ կը ձերբակալուէր: Յետոյ պատմեց երիտասարդաց ընկերութեան ժողովին երթալը որ հոգեւոր ժողով մը ըլլալ կ'ենթադրուէր, ուր երիտասարդներ ու երիտասարդուհիներ շուրջանակի քով քովի նստած էին, ուր պակաս չէին մերկ թիւեր, կուրծքեր եւ սրունքներ. եւ ուր երիտասարդաց մտքերուն մէջ հոգեւորէն զատ ամէն բան կար:

4) Վերջին օրերու անպարկեշտ նորաձեւութիւնները կը ջնջէ կանացի պարկեշտութեան զգացումը որ Աստուած գետեղած է ամէն մէկ մաքուր կնկան սրտին մէջ: Կանացի այս համեստութեան զգացումը՝ աղջկան մը եւ կնկան մը միակ ընական պաշտպանութիւնն է առաքի-

նութեան համար: Եթէ ջնջուի ան, իզական սե-
ռը անպաշտպան կը մնայ եւ չարին համար դիւ-
րին կ'ըլլայ մարդկային ձեւով գալու ու կողոպ-
տելու գայն իր անգին գոհարեղէններէն: Թաւո-
րոնի մէջ երեւցող դերասանուհին ոչ մի կերպով
ունի ամօթխածութեան զգացումը: Ինչո՞ւ: Միշտ
անա՞նկ էր: Ոչ, առաջին անգամ իր դերը կա-
տարած ատեն կարմրեցաւ: Աստիճանաբար ա-
մօթխածութեան զգացումը զինք թողուց և պար-
կեշտութիւնը անհետացաւ: Թաւորոնի դերասա-
նուհիներուն մեծամասնութիւնը իրենց ընթաց-
քին սկիզբը առաքինի աղջիկներ էին, բայց
վախճանին անոնցմէ կարեւոր մաս մը կորսնու-
ցած են իրենց պարկեշտութիւնը:

Տղոց հետ խօսակցութեան պահուն պէտք ե-
ղածին չափ համեստ չեն: Այսօր տղաքներ եւ
աղջիկներ անանկ նիւթերու վրայ կը խօսին որ
մեր մայրերը չէին երեւակայեք անգամ:

Ազատ թարգ.

(Շար.)

Վեր. ՆԻԳՕԼԱ ՓԱՓԱՋ

Ս. ԳՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ՄԻՍԻՈՆ. ԳՈՐԾԸ

Բ. ՀՐԱՇԱԼԻ ՅԱՋՈՂՈՒԹԵԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Համեմատաբար շատ կարճ եղած է Պօղոսի
միսիոնարական ազգայն գործունէութեան ժամա-
նակաշրջանը: Առաջին ճամբորդութիւնը սկսած
է հաւանաբար Յ. Տ. 45ին եւ երրորդը վերջացած
55ին: Բաւական ստոյգ է որ Հռովմի մէջ ատեն մը
հակոդութեան տակ ապրելէ ետքն ալ՝ դարձեալ
ազատ ձգուած է (61-64), հոն այդ պատեհութե-
նէն օգտուելով՝ ճամբորդած է Եփեսոս, Փիլիպպէ,
(Ա. Տիմ. Ա. 5), Յունաստան (Բ. Տիմ. Դ. 20) Կը-
րէտէ (Տիմ. Ա. 5) եւ վերջապէս Սպանիա: Այդ
հաշուով 13 տարի միայն մեծ առաքեալը կրցած
է ազատ ճամբորդել եւ Աւետարանը քարոզել:

Սակայն հակառակ ատոր՝ հրաշալի յաջողու-
թիւն ձեռք ձգած է ան: Այնքան մեծ ու օրհնա-
բեր եղած է անոր գործը, որու նմանը ուրիշ եւ
ոչ մէկ առաքեալ կամ միսիոնար ունեցած է: Այդ
կարճ ժամանակին մէջ անիկա կրցաւ «Աւետա-
րանով լեցնել Կիլիկիա, Կիպրոս, Գաղատիա,
Փոնտիս, Փոքր Ասիա (հին առումով), Մակե-
դոնիա, Յունաստան, Կրէտէ, Իտալիոյ մէկ մասը
եւ հաւանաբար նաեւ Սպանիա: Կրցաւ գերմարդ-
կային ուժով մը շարժել այն բոլոր անձերը ո-
րոնց հետ շփման եկաւ, յաղթել հակառակու-

թիւններու եւ մոլորութիւններու: Կրցաւ վերո-
յիշեալ բոլոր երկրամասերու կարեւոր կեդրոնե-
րուն մէջ «Աւետարանով ծնիլ» բազմաթիւ հա-
ւատացեալներ և զանոնք միացնելով կազմակեր-
պել շատ մը մեծ ու փոքր կենսունակ եկեղեցի-
ներ, որոնք իրենց կարգին լուսատու հանդիսա-
ցան եւ լուսաւորեցին շրջակայ քաղաքներն ու
գիւղերը: Կարճ խօսքով՝ գլխաւորաբար Պօղոսի
ազդեցութեան շնորհիւն էր որ Հռովմէական լայ-
նածաւալ պետութեան մէջ կամաց կամաց տա-
պալեցաւ հեթանոսութիւնը եւ անոր տեղ կանգ-
նեցաւ քրիստոնէութիւնը:

Այս արտակարգ յաջողութեան էական պատ-
ճառներն են.—

1. Անխախտ վստահութիւնը, թէ ինքը կը
գործէ իբր Յիսուսի պատգամաւորը.— Բանբերի
նախորդ թւոյն մէջ տեսանք թէ ինչպէս Տէրը՝
Պօղոսի դարձի օրէն ի վեր՝ զայն պատրաստեց
հեթանոսներուն համար եւ ապա ինչպէս անոր
հրամայեց, «Գնա՛, վասնզի Ես քեզ հռուսոր հե-
թանոսներուն պիտի զրկեմ» Գործ. ԻԲ. 21: Ան-
տիոքի մէջ նման հրաման մը եկաւ եկեղեցւոյն,
«Չատեցէք ինծի Բառնաբաւան ու Սօղոսը այն
գործին համար որու Ես կանչեք եմ ատոնք» Գոր-
ծ. ԺԳ. 2: Այսպիսի աստուածային յայտնութեանց
շնորհիւ Պօղոս ներքին խոր համոզումն ունեցաւ
թէ Քրիստոս զինքը կանչած է իբր առաքեալ
հեթանոսներու, հետեւաբար ինքը Անոր պատգա-
մաւորն է եւ Ան իր ետեւը կեցած է երկնային
ուժերով եւ իմաստութեամբ: Ինչպէս ունէ զեա-
պան՝ նոյնպէս եւ Պօղոս համոզուած էր թէ ին-
քը միայն խողովակ մըն էր. ոչ թէ ինք, հապա
ամենակարող Տէրը կը խօսէր ու կը զարժէր իր
միջոցաւ:

Այս վստահութեան կը համապատասխանէր
նաեւ իր ֆիւզանդուլութիւնը: Քանի որ Տէրը կան-
չած էր զինքը, ինքը Անոր ծառան էր, գերին էր,
ուստի անոր հնազանդիլը իր ուրախութիւնն ու
կերակուրն էր: Ինքն հեթանոսներու կ'երթար ոչ
այնքան կարեկցութեանէ՝ հապա ալ աւելի հնա-
զանդութեան ոգիէն մղուած: Ան թէեւ շատ մեծ
ցաւ կ'զգար հանդէպ իր խստացած ազգին, բայց
ոչ նաեւ հեթանոսներուն: Փոքր Ասիա եւ Եւրո-
պա գնաց, քանզի իր Տէրը զինքը հոն զրկեց:
Ինքը յաճախ ըսած է թէ կը ծառայէր, վասնզի
հնազանդիլ կ'ուզէր: «Այն երկնային տեսիլքին
անհնազանդ չեղայ ես» Գործ. ԻԶ. 19: Վա՛յ է ին-
ծի եթէ Աւետարանը չքարոզեմ, քանզի եթէ ա-
սիկա կամաւ ընեմ, վարձք կ'առնեմ, իսկ եթէ ա-
կամայ, ան ինծի յանձնուած անտեսութիւն մըն

է» Ա. Կոր. թ. 16, 17: Ինչպէս Մովսէս անապատէն Փարաւոնի գնաց եւ Երեմիա Իսրայէլի որդիներուն, քանզի Տէրը զիրենք կանչեց եւ ներքնապէս ստիպեց հնազանդելու, նոյնպէս նաեւ Պողոս հեթանոսներու առաքեալ եղաւ, վասնզի Քրիստոսի կապուած էր իբր Անոր գերին եւ չէր կրնար Անոր անհնազանդ ըլլալ:

Եւ քանի որ ինքը իբր պատգամաւոր ու ծառայ՝ առանց իր զգացումներուն նայելով՝ բացարձակաբար աստուածային կոչմանը հնազանդեցաւ, ձգտեցաւ միայն Քրիստոսի պատիւը բարձրացնել, ան կրցաւ զինքը գործածել իբր «ընտիր աման մը իր անունը կրելու հեթանոսներու ու «թագաւորներու եւ Իսրայէլի որդւոցը առջեւ», եւ իբր ելեքստրական մարտկոց մը, ուրկէ արձակուած աստուածային ուժը կրցաւ աշխարհը շարժել:

Աստուծոյ գործելու մեթոտը նոյնն է նաեւ այսօր: Ամենէն յաջողները ոչ թէ այն միսիոնարներն են որոնք հեթանոսներու կ'երթան կարեկցութենէ եւ ուրիշ բնական զգացումներէ դրդեալ, հապա անոնք, որոնք իրենց մէջ աստուածային անդրմազրելի կոչում մը կը զգան, եւ յաճախ իրենց փափաքներուն հակառակ իսկ կը ստիպուին հնազանդիլ այդ կոչմանը:

Կ'արժէ այս մասին գոնէ մի քանի օրինակներ յիշել: Վ. Քէյրի, ԺԸ. դարու միսիոնարութեան դրօշակիրներէն մին, 1786ին միսիոնարութեան ձեռնարկեց՝ միայն հնազանդելով Յիսուսի «Գաղէք, բոլոր աշխարհը աւետարանեցէք» հրամանին:

Ճան Փէյթըն կը վկայէ իրեն համար. «Իմ պնդումիս հակառակ, թէ իմ աղքատներս ինծի պէտք ունին, իմ մէջս օրէ օր աւելի զօրացաւ սա համոզումը—Աստուած քեզ զրկել կ'ուզէ: Աստուած զիս կը կ'անչէ, իմ մէջս սկսաւ աւելի բարձր հնչել ձայնը, որ կ'ըսէր, «Սկսուած գործը հանդարտ սրտով Տէրոջը ձգէ, գնա եւ սորվեցուր ժողովուրդներուն, ահա ես ամէն օր ձեզի հետ եմ»: Եւ այս խօսքերը իմ ականջիս հնչեցին զինուորական հրամանի մը նման:

Դարձեալ հնազանդութեան ճամբան ընտրելուն համար էր որ Փարիզի միսիոնարութիւնը 1895 ին աւետարանական միսիոնարութեան վրտանգուած փաստը Մատակասքարի մէջ իր ձեռքն առաւ: Այդ գործը Ֆրանսացի բողոքականներէն զատ եւ ոչ ոք կրնար ձեռք առնել: Եւ Տէրը անոնց ցուցուց թէ հակառակ բոլոր դժուարութեանց եւ հակառակ իրենց տկար ուժերուն սկսելու էին գործի: Անոնք ալ հնազանդեցան երբ տեսան թէ Տէրոջ հրամանն էր այդ: Աստուած ալ

օրհնեց իրենց այդ քայլը եւ տուաւ հարկ եղած բոլոր միջոցները: Մատակասքարի գործը ստանձնելէ առաջ՝ Փարիզի միսիոնարութիւնը միայն 400 000 Ֆրանք եկամուտ եւ 40 միսիոնար ունէր, սակայն ստանձնելէ յետոյ թէ՛ եկամուտը եւ թէ՛ միսիոնարներու թիւը եռապատկուեցաւ:

Այսպէս, այսօր ալ միսիոնարական գործին համար ամենէն կարեւորը Աստուծոյ կոչումն ընդունիլն եւ Անոր հնազանդիլն է: «Դժբաղդ հեթանոսներու հանդէպ եղած կարեկցութեան ըզզացումը, շատ հազուադէպ պարագաներու տակ միսիոնարութեան համար հերոսներ տուած է: Գութէն աւելի զօրաւոր եւ տեւական է հնազանդութեան շարժառիթը: Երբ միսիոնարութեան զաշտին մէջ փորձութիւնները շատան, երբ վիշտերը դիզուին, երբ տաանեակ տարիներու աշխատանքէ յետոյ արդիւնք չտեսնուի են. են, այդ ատեն Աստուծոյ կոչման հնազանդելու յօժարամտութիւնն է որ յաջած մարտիկին հաստատ դիրք կուտայ:

Ահա այս էր նաեւ Պօղոսի ոյժ ու աննկուն կամք տուողը: Ամէն նեղութեան, յուսախաբութեան եւ հակառակութեան ատեն, ան զիտակից էր թէ Աստուած էր զինքը կանչողը: Ինքը Անոր հրամանն էր որ կը կատարէր, ուստի Ան կեցած էր իր ետեւը եւ բոլոր բաները բարի գործակից պիտի ընէր:

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆԶԸ

ՃԻՆ ԿՏԱԿԱՐԱՆԻՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Նախապատրաստական նօթեր.—

Սուրբ Գրոց բուն պարունակութիւնը քննել սկսելէ առաջ, կարեւոր եւ օգտակար է նախապէս ուսումնասիրել շարք մը իրողութիւններ ու տեսակէտներ, որոնք կրնան իբրեւ բանալի ծառայել լաւագոյնն եւս ըմբռնելու Սր. Գրոց մեծամեծ յայտնութիւնները:

Ընդհանուր ներածութիւն մը անհրաժեշտ է ճանչնալու Գրքին նպատակը, ծագումը եւ բնոյթը: Ապա հարկաւոր է ճանչնալ Գրքին պատմութիւնն ու անոր յարակից իրողութիւնները: Ս. Գիրքը թէպէտ անհերքելի կերպով աստուածային ծագում ունի, բայց հրաշքով, անբնական կերպով վերէն վար ինկած գիրք մը չէ: Անցեալ մը ունի ան: Անոր պատմութիւնը յաճախ շրջապատուած է իրաւ, անձանօթ եւ մերթ միջին պա-

բազաներով, բայց ակներեւ է որ Աստուած իսկապէս նախանձախնդիր հոգածութեամբ մը հսկած է իր յայտնութիւնը պարունակող էջերուն վրայ: Աստուծոյ հոգածութիւնը տարիներու եւ դարերու ընթացքին ոսկիէ թելի մը պէս երկն-նալով, մերթ հոգեւոր արթնութեանց, մերթ իր ծառաներուն անշահախնդիր ջանքերուն մէջ յայտնուած է: Իր այս միջամտութիւններն ուժեղ ազդակներ եղած են, սպառնացող մոռացութեան եւ անտարբերութեան մոխիրներուն տակէն հանելու փոշոս ձեռագիրները, ետ երթալու, գուրգուրալու, վերակազմելու գիրքերը, միշտ կայուն եւ անձեռնմխելի պահելու համար Աստուծոյ վկայութիւնը ու յայտնութեան պատմութիւնը:

Կառաջադրենք ըստ կարելւոյն, հետզհետէ համառօտիւ քննելու Հին Կտակարանի պատմութիւնը եւ եկեղեցիին անոր հանդէպ բռնած դիրքը, ակնարկ մ'ալ պտըացնելով ձեռագիրներու և զանազան թարգմանութեանց պատմութեան վերայ: Բայց բուն նիւթին մէջ մտնելէ առաջ, այսու կուտանք մի քանի նախապատրաստական կէտեր:

* * *

Մեր Հին Կտակարանը կազմող 39 գիրքերը հրեաներուն կողմէ այլապէս բաժնուած էին:

1.— Օրէնքը (ԹՅՕՐԱ), որ կը պարունակէ հնգամաստեանը:

2.— Մարգարէները (Նէպիիմ), որք երկու մասերու բաժնուած էին:

ա) Առաջին կամ նախնի մարգարէները, այսինքն Յեսուայ, Դատաւորաց, Սամուէլի եւ Թադաւորացները (Ա և Բ թագաւորք ու Գ և Դ թագաւորք):

բ) Վերջի կամ յետագայ մարգարէները, այսինքն բուն մարգարէութիւնները. Սաայի, Երեմեայ եւ Եզեկիէլ եւ 12 պատիկ մարգարէութիւնները:

Բաժանման այս ձեւը անպատճառ չնըշանակեր թէ առաջին խումբը նախապէս զբ-ուած է, «Այլ միայն թէ առաջին խումբն է որ նախապէս իրարու միացուած եւ խումբ մը կազմուած է: Եթէ հրեայք նոյն դասակարգին մէջ գրած են պատմական եւ մարգարէական գիրքե-րը, անտարակոյս անոր համար է որ պատմական գիրքերու հիմը կազմող գրութիւններն շարադր-ուած եւ պահպանուած էին մարգարէից զպրոց ցին մէջ»: (1)

.....

(1) Bible Aunofée Vol I page 24

Արդարեւ բոլորովին հասկնալի է որ մարգարէները գրեցին Աստուծոյ թագաւորութեան պատմութիւնը: Վասնզի ինչպէս ներկան դատե-լու եւ ապագան լուսաւորելու, նոյնպէս անցեա-լի վերաբերեալ իրողութիւնները աստուածային հայեցակէտով մեկնելու համար ալ նոյնքան հոգեւոր իմաստութիւն պէտք է: Կարելի չէր որ լոկ շնչաւոր (քնական, մարդկային) մաքի տէր անհատ մը կարենար թափանցել անցեալ պատ-մութեան խորքերուն, ի լոյս հանելու համար Աստուծոյ վարուելակերպին պատճառներն ու արդիւնքները: Հոգեւոր բաները հոգեւոր կերպով կը քննուին: Ներշնչեալ մարգարէ մը ունի այս հոգեւոր միտքը, ուստի յարմար է ըստ արժա-նւոյն խմբագրելու Աստուած պետական պատ-մութիւնը:

3.— Գրուածքները (Քէթուպիմ), որ յետոյ Յունարէն «Սուրբ գրուածք» որակուեցաւ. կը պարունակեն,

ա) Սաղմոսաց, Առակաց և Յոբի բանաստեղ-ծական գիրքերը:

բ) Երգ Երգոց, Հռութ, Ողբ Երեմեայ, Ժո-ղովոդ եւ Եսթերայ գիրքերը: Ասոնք կը կոչ-ուէին (Մէկիյօթ) կամ հինգ պատատները եւ կարգաւ կը կարգացուէին Սինակոկներու մէջ մասնաւոր առիթներով: Երգ Երգոցը Զատիկի տօ-նին առթիւ, Հռութի գիրքը Պէնտէկոստէին, Ողբ Երեմեան Երուսաղէմի աւերման տարեդարձին առթիւ կը կարգացուէր. Ժողովոդը Տաղաւարա-հարաց տօնին օրերը, իսկ Եսթերի գիրքը փոքրի-մի տարեդարձին առթիւ:

գ) Դանիէլ, Եզրաս եւ Նէեմեայ (որք մէկ են հրէական կանոնին մէջ) և Մնացորդաց գիրքերը: Զմոռնանք նաեւ, որ ինչպէս 12 փոքր մարգա-րէութիւնները մէկ գիրք կը կազմէին, նոյնպէս թագաւորաց եւ Մնացորդաց գիրքերն ալ մէկ գիրք կը կազմէին, այնպէս որ հրէից Հին Կտա-կարանը կը պարունակէր 24 գիրք:

Սակայն Աղէքսանդրիոյ հրեաները, եօթա-նասնից կոչուած թարգմանութեան մէջ կարգ մը փոփոխութիւններ կիրարկեցին զրքերը շարելու այս կերպին մէջ: Այս նոր կարգադրութիւնը մոռա գործեց «Վուլկաթ» կոչուած Սուրբ Գրոց լատիներէն թարգմանութեան ու այնու տարած-ուելով շարունակուեցան մինչեւ այս օրերուս գործածուած Սուրբ Գրքերու մէջ:

Ահա թէ ի՞նչու հրէական և մեր ունեցած Հին Կտակարանները բոլորովին նոյն զրքերէն կազմ-ւած ըլլալով հանդերձ, տարբեր շարք ունին ու 15 զրքերու ալ տարբերութիւն մը: 2. Բ. Պ.

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

ՅՐԵՏԵՐԻՔ ՕՊԸՐԼԻՆ

Բ. ԻՐ ՀՈՎՈՒԱԿԱՆ ՊԱՇՏՕՆԻՆ ՄԷՋ

1. ԴԺՈՒԱՐՈՒԹԻՆՆԵՐ ԵՆ յԱՊԹՈՒԹԻՆՆԵՐ.—
Հազիւ Շեթայնթալի մէջ հաստատուած էր եւ իր
գործին ձեռնարկած՝ Օպըրլին տեսաւ թէ կրկ-
նակի էր իր պարտականութիւնը հանդէպ իր
թեմի ժողովուրդին: Նախ՝ եւ զխաւորաբար՝ աշ-
խատելու էր անոնց հոգիներու փրկութեան հա-
մար. երկրորդ՝ նիւթական բարեկեցութեան ա-
ռաջնորդելու էր զանոնք: Ան կը հաւատար թէ
ժողովուրդը պիտի կարենար թէ՛ միոյն եւ թէ՛
միւսին հպանիլ, եթէ հաւատարմաբար հնազան-
դէր Տէրոջը խօսքին: Ուստի անոր կը քարոզէր
Աստուծոյ փրկարար շնորհքը եւ սիրազեղ ու
գորեզ խօսքերով կը յորդորէր զայն ապրելու Ա-
ւետարանին սկզբունքներուն համաձայն: Երբ նա
կը տեսնէր որ ժողովուրդը կիրակի օր լսած ճշ-
մարտութիւնները չկիրարկէր իր առօրեայ կեան-
քին մէջ, անհրկիւղ կը ձաղկէր այն մեղքերը,
որոնք Շեթայնթալցիներու ընտանեկան յարկը
կը քայքայէին, ընկերական կեանքի հիմերը կը
խախտէին եւ բոլոր ժողովուրդը դէպի դժոխք
կ'առաջնորդէին:

Բնականաբար զիւղացիներու հաճելի չէր լը-
սել մէկը, որ կը ջանար զիրենք իրենց երկա-
րամեայ քուէն արթնցնել: Ուստի անոնցմէ շա-
տեր սկսան ատել ու հալածել Օպըրլինը: Ոմանք
նոյնիսկ համաձայնեցան կիրակի օր դարանա-
կալ ըլլալ իրենց «նորութեանց հետամուտ» պատ-
ուելիին եւ զայն լաւ մը զանակոծել: Օպըրլին
յարմար առնին իմացաւ անոնց դիտաւորու-
թիւնը եւ այդ կիրակի օրուան համար իր քա-
րոզի բնաբան ընտրեց, «Բայց եւ ձեզի կ'ըսեմ,
չարին հակառակ մի կենաք, հապա եթէ մէկը
ապստակ մը զարնէ աջ ծնօտիդ, դարձուր անոր
միւսն ալ»: Եւ խօսեցաւ քրիստոնէական հեղու-
թեան եւ համբերութեան վրայ ու ցուցուց թէ
մարդ իբր հաւատացեալ պարտաւորեալ է կրել
անիրաւութիւններն ու վիրաւորանքները: Հակա-
ռակորդները՝ պաշտամունքէն յետոյ՝ հաւաքուե-
ցան իրենց ընկերներէն միոյն տունը եւ ծաղրե-
ցին պատուելին ըսելով, «Հիմա յայտնի պիտի
ըլլայ թէ ան կը գործադրէ՝ ինչ որ կը քարոզէ
ուրիշներուն»: Ասոր վրայ դուռը բացուեցաւ եւ
Օպըրլին կայնեցաւ անոնց մէջտեղը: «Ահա հոս
եմ, սիրելի բարեկամներ, ըսաւ ան պատկառազ-
դու հանդարտութեամբ, «Ձեր դիտաւորութիւնը

ինծի յայտնի է, զիս ձեռնել կ'ուզէք, քանզի զիս
յանցաւոր կը նկատէք: Եթէ երբեք ես ոտնակոխ
ըրած եմ ինչ որ ձեզի քարոզած ու սորվեցու-
ցած եմ, օ՛հ ուրեմն պատժեցէք զիս, հոս եմ եւ
սիրով կ'ուզեմ խնայել ձեզի գաղտնի դաւադրու-
թեան ստորնութիւնը»:

Դիւղացիները ամօթահար՝ նախ ափիբերան
մնացին, եւ ապա մէկիկ մէկիկ մօտեցան պատ-
ուելիին եւ անկէ ներողութիւն խնդրեցին:

Սակայն քանի մը շարաթ յետոյ նման դէպք
մը դարձեալ տեղի ունեցաւ: Օպըրլին կիրակի օ-
րեր մօտակայ գիւղերէն մին քարոզելու կ'եր-
թար եւ ապա տուն կը վերադառնար: Արդ, մի
քանի երիտասարդներ վճռեցին՝ յաջորդ կիրակի
ճամբան իրեն սպասել եւ զինքը ջուրի աւազան
մը նետել: Անոնք ըսած էին, «Մեր պատուելին
սաստիկ տաք է, կ'ուզենք զայն քշիկ մը դովա-
ցնել»: Երբ Օպըրլին զայս իմացաւ, իր կիրակի-
նօրեայ քարոզին մէջ յիշեց թէ Աստուծոյ մա-
նաւոր պաշտպանութիւնը կը վայելեն այն ամէ-
նը որոնք Անոր կը վստահին եւ Անոր կամքը կը
կատարեն. ապա աւելցուց, «Սիրելի բարեկամներ,
ինծի ծանօթ է իմ հակառակորդներուս դաւը, ի-
մացած եմ որ անոնք կ'ուզեն տուն վերադառ-
նալու առննա՝ զիս ջուրի աւազանը թաղել: Բայց
դուք չէք ճանչցած իմ ձիս, եթէ կը կարծէք թէ
կարելի է զիս բռնել: Այսու ամենայնիւ ես իմ
թշնամիներուս գործը պիտի դիւրացնեմ եւ ոտ-
քով տուն պիտի վերադառնամ... մի խորհիք թէ
անոնք պիտի կարենան նոյնիսկ իմ գլխուս մէկ
մազը ծռել՝ առանց իմ երկնաւոր Հօրս թուաւու-
թեանը»: Եւ իրաւ որ ոտքով գնաց: Երբ ծա-
նօթ վայրը հասաւ, տեսաւ որ շատ մը հաստա-
քաղուկ եւ հուժկու երիտասարդներ մացառուտին
ետեւը իրեն կ'սպասէին: Օպըրլին անոնց քովէն
անցաւ հանդարտ եւ անվախ գնացքով եւ քաղց-
րութեամբ բարեւելով հակառակորդները: Անոնց-
մէ եւ ոչ մին յանդգնեցաւ ձեռք զարնել Աստու-
ծոյ պաշտպանեալին:

Այս կարգի դէպքեր յայտնապէս պօրացուցին
ու ընդարձակեցին Օպըրլինի ազդեցութիւնը իր
համայնքին մէջ: Դիմակազերծուած հակառա-
կորդները տեսան թէ չպիտի կարենան տեսա-
կանօրէն դիմադրել իրենց հաստատակամ պատ-
ուելիին, որուն անշահախնդրութիւնը, անձնագո-
հութիւնը եւ քաղցրութիւնը սկսան խորապէս
ազդել նոյնիսկ ամենէն անզգայ արտերուն: Ա-
մէնն ալ սկսան զայն սիրաշահելու ետեւէ ըլլալ
եւ համակերպեցան անոր հանրօգուտ ձեռնարկ-
ներուն:

2. Օպերըին իբր խորհրդատու եւ օգնական իր համայնքին՝ անոր նիւթական դժուարութիւններուն մէջ.— Օպերըին իր պաշտօնավարութեան առաջին օրերուն իսկ՝ մեծ եռանդով նուիրուեցաւ իր սիրելի ժողովուրդին նիւթական թշուառութիւնը վերցնելու գործին։ Քանզի ան գիտէր թէ ազգատուութիւնը մայրն է շատ մը մեղքերու։ Այս ուղղութեամբ շատ են իր մտցուցած բարեփոխումները Շթայնթալի մէջ։ Հոս կ'ուզենք յիշել միայն մի քանի կարեւորները։

Ամենէն առաջ իմաստուն մարդը իր ուշագրութիւնը դարձուց անտեսուած երկրագործութեան վրայ։ Հոս բարեփոխութիւն մտցնելու համար ինք անձամբ մշակեց մի քանի եկեղեցապատկան արտեր եւ անոնց վրայ սկսաւ կատարել իր զիւղատնտեսական փորձերը։ Գետնախնձորի ու բանջարեղէնի նոր տեսակներ ներմուծեց, մրգենիներ տնկեց եւ մեծ ջանքով ազնուացուց հացահատիկները։ Երկրագործները՝ տեսնելով Օպերըինի ներմուծած նորութեանց յաջող արդիւնքը՝ սկսան անոր խրատներուն դիմել։ Օպերըինի ուզածն ալ այս էր, ուստի նա ցուցուց անոնց թէ, ինչպէս կարելի էր ազնուացնել բոյսերն ու առատ հունձք արտադրել։ Շատ չանցած իւրծիթները շրջապատուեցան պտղատու ծառերով ու բանջարանոցներով եւ չոր զիւղերը բոլորովին տարբեր երևոյթ մը ստացան։

Անխոնջ հովիւը իր զիւղացիներուն սորվեցուց նաեւ քաղմացնելու եւ ազնուացնելու իրենց արջառնները եւ ընդարձակելու ու բարելաւելու իրենց մարգագետինները։ Հիմնեց գիւղատնտեսական ընկերակցութիւն մը, խնայողական ու վ. ո. խառնուական անտուկներ եւ աղքատախնամ մի. ութիւն մը։ Քիչ ետք այլեւս կարելի էր Օպերըինի թեմին մէջ մուրացկանի մը հանդիպել։

Օպերըին մեծ ուշադրութիւն դարձուց նաեւ արհեստներու, ընտրեց շատ մը ընդունակ պատանիներ ու զրկեց մեծ քաղաքներ, ուր անոնք մի քանի տարիներ վարժուեցան զանազան արհեստներու մէջ եւ ապա դարձան իրենց հայրենիքը։ Քիչ ետք Շթայնթալ ունեցաւ իր լաւ հիւսնները, որմնադիրները, դարբինները գերձակները են, են։ Օպերըին Շթայնթալի մեծ ծառայութիւն մատուց՝ նաեւ շինել տալով ճամբաներ, փողոցներ ու կամուրջներ, որոնց միջոցաւ նա ազատեց ժողովուրդը իր կղզիացեալ գիրքէն եւ գայն յարաբերութեան մէջ դրաւ ուրիշ գաւառներու հետ։

Ինչպէս նաւապետի մը ճարպիկութիւնը փութորկի ատեն ի յայտ կուգայ, նոյնպէս ալ Օ-

պերըին մեծ տագնաւաններու ատեն ցուցուց իր անձնուիրութիւնն ու իմաստութիւնը։ 1812ին մէկ կողմէն ձախող հունձքը իսկ միւս կողմէն թշնամի բանակներու աւերումները մեծ տառապանքի մատնեցին Շթայնթալը. նեղութիւնը աւելի բարձրացաւ 1816ին եւ իր գազաթնակէտին հասաւ 1817ին, ցուրտ ու անձրևոտ ամառուան մէջ գետնախնձորները բոլորովին փճացան եւ հացահատիկին ալ հազիւ երկու երրորդը հասունեցաւ։ Ժողովուրդը կը գտնուէր սովահարութեան վտանգին տակ։ Գլխաւորաբար Օպերըինի անխոնջ ջանքերն էին որ մեղմացուցին տառապանքը. անիկա թերթերու միջոցաւ աշխարհի ծանօթացուց իր թեմի թշուառութիւնը եւ մեծերու ուշադրութիւնը հրաւիրեց իր զժբաղդ ժողովուրդին վրայ։ Եւ անաւ ամէն կողմէն սկսան հասնիլ դրամ, նպարեղէն եւ զգեստ։ Օպերըինի մեծ անունը ստիպեց շատեր, որ օգնութեան հասնին սովահարներու։

Այս բոլոր արտաքին զբաղումներու ստեն Օպերըին երբեք չէր կորսնցնէր ինքզինքը, իր գլխաւոր նպատակը չէր հեռացնէր իր մտքին առջեւէն։ Ուրիշ մը այս ամէնը պիտի ընէր թերեւ իբր արտաքին գործ միայն։ Բայց այդպէս չէր Օպերըին. ան՝ իր խորհելու եւ զգալու մասնաւոր կերպին անպատճառ՝ ամէն բան կը հոգեկանացնէր։ Ուստի ժողովուրդին տնտեսական բարձրացման համար նուիրուած գործն ալ կը նկատէր քրիստոնէական պարտականութիւն, իբր հպատակում Աստուծոյ կամքին եւ արտացոլում եղբայրական սիրոյ։ Ահա այդ պատճառաւ հոգեւոր հրաշալի օրհնութիւններ յառաջ կը բերէր նաեւ իր արտաքին գործունէութիւնը։

ՄԱՆԿԱՆՑ ՍԻՒՆԱԿ

ՆԻԳՕԼ

Մինչեւ 15 տարեկան հասակը Նիգօլ դպրոցին մէջ ծոյլ եւ անկարգ՝ տունն ալ անհնազանդ եւ անկիրթ աղջիկ մը եղաւ։ Իր մայրը որ 5 գաւառներով այրի մնացած էր՝ շատ ծանր յոգնութեամբ պզտիկ ազարակ մը կ'աշխատցնէր իր մեծ սղուն հետ միասին։ Նա ի մէջ այլոց քրիստոնեայ ընտանիքի մըն ալ կարազ կը հայթայթէր։ Օր մը երբ իր աղջկան չար վարքին վրայով այս յաճախորդ տանտիկնոջ գանգատեցաւ՝ նա խնդրեց մօրմէն որ Նիգօլը ամէն հինգշաբթի կէսօք ետք զրկէ իրեն գաւառաց դասերուն եւ

խաղերուն մասնակցելու: Մայրը զրկեց. եւ այս յարաբերութիւնը ամենէն երանելի արդիւնքն ունեցաւ: Ասիկա պզտիկ աղջկան կեանքին մէջ նոր շրջան մը բացաւ, որովհետեւ շատ չանցած ան իր սիրտը Տէր Յիսուսի տունը եւ իր կեանքին մէջ «Ամէն բան նոր եղաւ»:

Այդ օրէն սկսեալ Նիգօլ տան գործերուն մէջ իր մօր աջ բաղաւկը դարձաւ. իսկ տան մէջ իր-մէն աւելի պզտիկները խնամելու հոգը բոլորովին իր վրան առաւ: Բայց ամէնը այս չէր: Անիկա տունին մէջ ուրախութեան նօթ մը մըտցուց որը մինչեւ հիմա չկար: Մանաւանդ կիրակի օրերը՝ որոնք մինչեւ հիմա տխուր օրեր եղած էին: Որովհետեւ այն օրերը թէեւ չէին աշխատե՛ր՝ բայց միայն իրենց մարմինը կը հանգստացնէին:

Նիգօլ սկսաւ անոնց կարգաւ այն գեղեցիկ գիրքերը որ իրեն փոխ կը տրուէին, եւ կ'երգէր այն գեղեցիկ երգերը զորոնք ինքը սորված էր: Անիկա անուշ ձայնի տաղանդ մ'ունէր, եւ դայն բոլոր սրտով Աստուծոյ ծառայութեանը յանձնած էր: Իր մայրն ու իր 4 եղբայր ու քոյրերը այս թարմ եւ ուրախ ձայնին հմայքը կը վայելէին, եւ տան մէջ զուարթութիւն կը տիրէր:

Բայց երբեմն, երբ մայրը շուկայէն առանց շատ բան ծախած ըլլալու վերադառնար, գէմքին վրայ տխրութիւն կար եւ կարծես՝ ճակատի կնճիռներուն իւրաքանչիւրը սա չարապուշակ բառերով կը կարդացուէին. — տան վարձք, տուրքեր, պարտքերու վճարում, եւն: Այն ատեն Նիգօլ քաղցրօրէն կ'երգէր. —

Սիրել Յիսուսն, կրկին սիրել,
Հանգչիլ Անոր կուրծքին վրան...

Եւ մայրիկին ճակատէն կնճիռները կը սըրբուէին, եւ անոր խեղճ, յոգնած սիրտը վստահ սիրով մը Յիսուսի կուրծքին վրայ կը հանգչէր:

Օր մը մայրը Նիգօլը մօտակայ գիւղ մը զրկեց մէկէ մը դրամ գանձելու: Ծամբան երկար էր: Նիգօլ կէս օրին ճամբայ ելաւ, բայց՝ վերադարձին դեռ տուն չհասած ագարակէն հեռու՝ գիւղերը վրայ հասաւ:

Բայց մեր Նիգօլը քաջ էր: Ան գիտէր թէ իր երկնաւոր Հայրը զինք ամէն փորձանքէ կը պաշտպանէ: Լուսինը՝ որ ամպի մը ետին պահուըտած էր, յանկարծ դուրս ելաւ եւ դաշտերը իր աղօտ ու խորհրդաւոր լուսովը լուսաւորեց: Ամէն բան շատ խաղաղ եւ զով կ'երեւնար ամառուան տաք օրէ մը ետք: Նիգօլ չկիցաւ դիմադրել ճամբուն եզերքէն իջնող զառիվայրի մը վրայ հանգչելու փափաքը, այս սքանչելի տե-

ւարանը վայելելու համար:

Իր հիացումը յայտնելու համար միշտ երգելու պատրաստ՝ նա սկսաւ իրեն սիրելի երգերէն մին երգել:

Յիսուսի եկ, Յիսուսի եկ,

Նա կը կանչէ այսօր.

Այսօր տունդ եկ, անառակ,

Յիսուսի եկ այսօր:

Նիգօլ չէր գիտեր թէ իր ետին քանի մը քայլ անդին երիտասարդ զինուոր մը խոտին վրայ ինկած պառկած էր: Անիկա մօտակայ պանդոկէ մը զինով վիճակի մէջ դուրս ելլելով իր ճամբան կորսնցուցած էր, եւ յոգնած ըլլալով այս զառիվայրին ետին պառկած էր՝ սպասելով որ զիշերուան զով օդը գայ եւ ինք կարենայ ճամբան շարունակել: Բրիտանական ծնողաց գաւառի այս երիտասարդը սակայն՝ իր չար վարքով անոնց սաստիկ վիշտ կը պատճառէր: Այսու նա աւելի կամքով տկար մէկն էր քան բոլորովին ապականած. եւ յաճախ կը տենչար աշխարհի եւ Սատանայի կապերէն ինքզինքը ազատել, բայց չէր յաջողեր:

Երբ այս մատղաշ ձայնը լսեց որ խաղաղ զիշերուան լուսթեան մէջ կ'ելլէր թարմ եւ ջինջ, իր դէմքն ալ աստեղագարդ երկինքին դարձուցած, իր սրտին մէջ բան մը սկսաւ թրթռալ:

«Այսօր տունդ եկ, անառակ...» «Ո՛հ, ես եմ այդ անառակը, եւ որքա՛ն ատենէ ի վեր...

Նիգօլ կը շարունակէր:

Կը սիրէ քեզ, կը սիրէ քեզ,

Կը սիրէ քեզ այսօր.

Այսօր կը սիրէ քեզ,

Յիսուսի եկ այսօր:

«Կրն՞այ զիս սիրել, զի՛ս, զիս, մեղքերու մէջ թաղուած անարժան...»

Եւ երգը կը շարունակէր:

Կը ներէ քեզ, կը ներէ քեզ,

Կը ներէ քեզ այսօր.

Ընդունէ Անոր փրկութիւնն,

Յիսուսի եկ այսօր:

«Ո՛հ, Աստուած իմ, Դուն նոյնիսկ ինծի պէս քեզաւորի մը կը ներե՞ս...»:

Նիգօլ ոտքի ելած է, կը վախճայ թէ մայրը իր մասին կը մտահոգուի, ճամբան սկսելով երգին վերջին համարը կ'երգէ:

Նա կը ջնջէ, Նա կը ջնջէ,

Բոլոր մեղքերդ այսօր.

Այսօրն է առատ շնորհաց օրն,

Յիսուսի եկ այսօր:

«Այո՛, Տէր Աստուած, այս շնորհաց օրը ին-

ծի համար է, թող պիտի չտամ որ այսօրը անցնի, զի եթէ այսօր չըլլայ, երբեք պիտի չըլլայ: Ներէ եւ ջնջէ իմ բոլոր մեղքերս Յիսուսի սիրոյն համար»:

Նիզօլ դեռ իրենց ազարակին դուրսի երկաթ դռնէն չմտած՝ երկինքի հրեշտակները ուրախութեան սկսած էին մեղաւորի մը ապաշխարելուն վրայ. քանզի Տէրը որ միշտ հաւատարիմ է՝ իրեն եկողը երբեք չմերժեր եւ դուրս չհաներ: Նիզօլ երբ երկինք երթայ՝ պիտի տեսնէ եւ յաւիտեան ուրախանայ իր երգին կատարած այս փրկութեան արդիւնքին վրայ, վասնզի նա իր ձայնը Յիսուսի նուիրեց:

Եւ զուր սիրելի մանուկներ, ձեր սիրտերը Յիսուսի տուած էք. եւ եթէ տուած էք, ի՞նչ կը խորհիք ընել Անոր համար:

ՏԻԿ. ՆՈՅՆԵՄԻ ՎԻՏԷՄԱՆ

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ ԳՈՐԾՔ ԱՌԱՔԵԼՈՑԷՆ

(Մանկանց՝ 15 տարեկանէն վար եղող)

- 1—Գտիր անուն մը եւ բառ մը որ Գործ. Ա. 1 ի մէջ եւ Ղուկ. Ա. 1-3 ի մէջ նոյնն են, եւ այս երկու գիրքերուն ալ Ղուկասի զրած ըլլալը կը փաստեն:
- 2—«Վկայ» կամ «Վկաներ» բառը առնուազն վեց համարներու մէջ յիշուած է Յիսուսի յարութեան հետ 1-13 գլուխներուն մէջ: Գտիր այն համարները:
- 3—Գտիր զուր մը եւ անոր մէջ երկու համարներ (նոյն գէպքին վերաբերեալ) որուն մէջ Պետրոսի զրամ չունենալը բայց հաւատքով հարուստ ըլլալը յիշուած է:
- 4—Ո՞վ ժողովի մը մէջ քննադատելով երբորդ յարկի պատուհանէ մը վար ինկաւ:
- 5—Ո՞վ ըսաւ, «Տէր, ի՞նչ կ'ուզես որ ընեմ»: «Ես ո՞վ էի որ կարենայի Աստուծոյ դէմ դնել»: «Ի՞նչ բան զիս կ'արգիլէ մկրտուելէ»: «Երբ ժամանակ ունենամ, ես քեզ նորէն կը կանչեմ»: «Բիշ մնաց որ զիս համոզես քրիստոնեայ ըլլալու»: «Տէրեր, ինծի ի՞նչ պէտք է ընել որ փրկուիմ»: «Կարգացածդ կը հասկնա՞ս»: «Առաւել Աստուծոյ հնազանդիլ պէտք է քան թէ մարդոց»: «Ապաշխարեցէ՛ր ու զարձի եկէ՛ք որպէսզի մեղքերնիդ ջնջուի»: «Երկնային տեաիւքին անհնազանդ չեղայ ես»:
- 6—Գործ. Առաքելոց Ը. 28-35 ի մէջ Եթովպացի ներքինիին կարգացածը Եսայ. ո՞ր գլուխն էր:

7—Ո՞ր եւ որո՞ւ համար ըսուած է թէ, «Կը բռնահաղատէր քրիստոնեաները որ հայհոյեն»:

8—Յիշէ երբեք պարագաներ, որոնց մէջ մարդիկ առաքեալները Աստուծոյ տեղ զրին, երկրպագելով, զո՞ն ընել ուզելով կամ Աստուծոյ կոչելով:

9—Հին Կտակարանի՝ անձնաւորութիւններէն ուրոնց անունները յիշուած են Գործ. Առաքելոցի մէջ, առաջին 13 գլուխներուն մէջ:

10—Ո՞ր 2 անձնաւորութիւնները մանկութեան իրարու անդակից եղան, բայց մեծնալէ յետոյ մին քրիստոնեայ մը եղաւ, իսկ միւսը քրիստոնեաները հալածող մը:

11—Բ. 38 ի և Գ. 19, 20 ի մէջ ի՞նչ պատճառներու համար ապաշխարելու էին մարդիկ:

12—Ո՞վ եւ ի՞նչ պատճառով կոյր դարձաւ և Սատանայի որդի կոչուեցաւ:

13—Ե՞րբ ամբողջ եկեղեցին մէկ բանտարկեալի մը համար աղօթեց, եւ ի՞նչպէս պատասխանուեցաւ:

14—Ո՞ր եւ ինչո՞ւ համար ըսուած է, «Ամէն տեղ ատար դէմ կը խօսին»: Որո՞ւ:

15—Պօղոս Եւրոպայի մէջ առաջին աւետարանչական ժողովը ո՞ր ըրաւ:

16—Գործ. 2. 11 և 15 ը լից ԼԴ. 30 ի հետ բաղդատելով ցուցուր թէ՛ երբ սուտ վկաները կ'ամբաստանէին Ստեփանոսը, թէ՛ Աստուծոյ ու Մովսէսի դէմ կը հայհոյէ, Աստուծոյ ի՞նչպէս հերքեց այդ ամբաստանութիւնը:

17—Պօղոսի դարձը քանի՞ անգամ եւ ո՞ր գլուխներուն մէջ պատմուած է:

18—Այս գլուխներէն իւրաքանչիւրին մէջ Պօղոսի հնազանդութիւնը ցուցնող համարները զըտիր:

19—Ստեփանոս քարկոծուելու ատեն 2 կարճ աղօթք ըրաւ, զորոնք ուրիշ մէկն ալ ըրաւ: Ի՞նչ տարբերութիւնով:

20—Գտիր հետեւեալ համարներուն տեղերը, «Եւ հիմա ի՞նչ կ'ուշանաս, ելիր մկրտուէ ու մեղքերդ լուա»: «Տէր Յիսուսի անունը կը մեծարուէր»: «Մեռնելու ալ պատրաստ եմ Տէր Յիսուսի անունը համար»: «Յիսուս անունով մեռածի մը վրայ, որուն համար Պօղոս կ'ըսէր թէ կենդանի է»: «Ի՞նչ, չհաւատալու՞ք բան կ'երեւնայ ձեզի թէ Աստուծոյ մեռելները կը յարուցանէ»: «Մեռելներու յարութիւն պիտի ըլլայ, թէ՛ արդարներուն եւ թէ՛ մեղաւորներուն»: «Բոլոր մարդոց ազգերը մէկ արիւնէ ըրաւ»: «Պօղոս զանոնք տեսնելով զոհութիւն տուաւ Աստուծոյ եւ սիրտ առաւ»: